

ԵՐՈՒՍԱՂԵՄ, ●● ● ԵՐՈՒՍԱՂԵՄ...

ՎԻՊԵՐԳՈՒԹԻՒՆ



ԴՐԵՑ

ՇԱԽԱՐԾ ՆԱՐԴՈՒՆԻ



Imp. A. DER AGOPIAN
17, Rue Damesme - Paris

ՓԱՐԻԶ 1938

891.99

1098

?

?

7.-40 Онуртүрк 6.

1915, Киргизи-
1915

891.99
Հ 40



ԵՐՈՒՍԱՂԵՄ, ● ● ԵՐՈՒՍԱՂԵՄ...

ՎԻՊԵՐԴՈՒԹԻՒՆ



ԳՐԵՑ

ՇԱՀԱՐՁ ՆԱՐԴՈՒԽԻ

748
1098

A 78956



ՓԱԼԻԶ 1938

ՅԱՌԱՋԱԲԱՆ



Շարժանկարի համար գրած եմ այս գրքոյ-
կը, — նախ գծագրութիւն մը, որու միս տըր-
ուեցաւ քիչ մը գրականութիւն, եւ վիպերգու-
թեան ձեւ առաւ ի վերջոյ:

Բայց նիհար այս գործը ոտքի կեցնելու
համար՝ հարկ եղաւ որ երկար պրատումներ
կատարեմ. — Օրինակ, չեմ տեսած Երուսա-
ղիմը, ուստի ուսումնասիրեցի քաղաքին պատ-
մական աշխարհագրութիւնը՝ ճշդելու համար
դիրքը զոր ունէր Քրիստոսէ ետքը 70-80 ական
թուականներուն: Յատկապէս քարտէս մը պատ-
րաստեցի, արձանագրելու համար քաղաքներուն

անզագրութիւնը, ճամբաները, հեռաւորութիւնը, ուղևորի մը պէս երեւակայնլով անցնիւ այդ վայրերէն: Կը կարծեմ թէ բան չէ մոսցը-ւած: Մէկ սխալ միայն նշմարեցի վերջէն — մարդարէներու դիւղը, թեկուա, որ կը գըտ-նուի հարաւ, դրած եմ հիւսիս:

Ուսումնասիրեցի նաև ժողովուրդին պատ-մութիւնը, զգեստաւորումը, սովորութիւննե-րը^(*) եւ ուղեցի հաւատարիմ մնալ Աստուածա-շնչական լեզուին: Խորագիրը, որ կրկնութիւնն է քաղաքին անուան, յատկապէս ընտրուած է՝ յիշեցնելու նպատակով երայական ոճը, որ երաժշտական գոյն ունի եւ տարբեր է հայկա-կան ոճէն— նոյնպէս ընդունակ, այս ձեռով, բառերը կրկնելու, բայց ուրիշ մտահոգու-թեամբ:

1.— Այսպէս, Մեղեդիներ, Մեղեդի-ներ^(*) կը մատնէ Հեղնանք՝ սկեպտիկ հոգիի մը խորէն բիսած, — հեղինակը ըսել կ'ուղէ թէ երաժշտական մթնոլորաը թերեւս դինովցնէ ձեզ, բայց այդ գինովութիւնը տալու համար

(*) Մեղադրանիք մը զոր պիտի ընեն շա-տեր, — ինչո՞ւ այդ ուսումնասիրութիւնը չփոր-ձեցիր մեր ժողովուրդին պատմութեան վրայ, նիւթը առնելու համար Հայոց հին կեանքէն:

գրուած չե՞ն այդ « մեղեդիները », այլ հետեւ համար բնութեան — որ մաշկ կը շինէ ու կը զնէ ամէն բանի վրայ . Մեղեդիներուն մէջ երաժշտական մթնոլորտը գրական հնարք մընէ միայն , մաշկ մը , ծածկելու համար մտածումին մերկութիւնը կամ դառնութիւնը : Խորշելի կը դտնեմ մերկ մտածումը — ինչպէս եւ այն գրականութիւնը , զոր ոմանք , մտածողի տիտղոս առնելու համար , կը չիւսեն վարժապետական տրամախոհութեամբ եւ չարչարալից խոկումներով : Մտածումը միշտ պատմուման մը կը կրէ եւ իր ամէնէն վայելուչ պատմումանն է զգացումը : Այստեղ արդէն կը խոստովանիմ որ dualiste եմ , սակայն երբ կը մտածեմ թէ Մեղեդիներու իրանիւթը (substance) տառապա՛նքն է , երաժշտական ձայնամշուշով ծածկըւած , այն վարդապետութեամբ թէ մեծադոյն իմաստութիւնը կը կայանայ տառապանքին մէջ , այլեւս անկարող կը դառնամ լուծելու հարցը որ կը ներկայանայ անմիջապէս . — Տառապան-

(*) Մեղեդինե՛ր , Մեղեդինե՛ր (հեթեաբեւ բանաստեղծութիւն) , գրեց Շ. Նարդումի , հրատարակութիւն « Յառաջ »ի , տպ . Փարփա 1934 :

քը իմացո՞ւմ է թէ զգացում (*): Ինչ որ գիտեմ, այն է թէ Մեղեդիները հոգեբնախօսական առողջ տառապանք մըն է, իմ երիտասարդութեանս պատմութիւնը: Գերմանական դպրոցը հիւանդութիւն կը համարի երիտասարդութիւնը, — արդարեւ ամէն երիտասարդ ջերմութիւն ունի միշտ, եւ ամէնէն գլխաւոր ախտանշանը՝ անկարելի երազներ, իրականութենէն դուրս ապրելու ցանկութիւն, իր մէջ կը խմորուի ընկերային եւ բարոյական ըմբոստութիւն մը, կը տառապի՛: Մինչեւ որ հանգչի գեղձերու կրակը: Այդ հիւանդին գրականութիւնը ածական կը հագնի, պատկերներու ճոխ մահիճի մէջ կը պառկի, աչքի եւ ականջի պատրանքներու սիրահար՝ գունապար կամ ձայնախաղ կ'որոնէ: Հոգեբնախօսական վերլուծումներու ծանօթքնադատը — այսինքն բո՛ւն քննադատը — պարտաւոր է մերկացնել ու դանել իմացական տառապանքը, այլ խօսքով՝ զգայուն մտածու-

(*) Ֆրոյտի երիտասարդ հետեւորդներէն՝ Տոք. Նախք, մազոլիգմը ուսումնափրած ժամանակ, տառապանքին հանաչումը կը կատէ հոգեախտաբանական այդ ախտերեւոյթին, — սխա՛լ: Որպիեւու ամէն տառապանք կառուած չէ մազոլիգմին:

մը, որ կ'աշխատի ծածկել իր մերկութիւնը՝ ճիշտ ինչպէս Աղամ եւ Եւա, մեղքին գիտակցութենէն վերջ, ըստ երրայական աւանդութեան :

Գրական այս գոլոցը, որ կը սիրէ ծածկել բայց եւ չեղ ճամբով մը մատնել, ոմանք կը կոչեն ցոլարան, — արդարեւ Մեղեդիները ուրիշ բան չէ բայց եթէ ցոլարան մը — (*) ուր երաժշտութիւնը կը ծառայէ ցոլացնելու տառապանքին իմացումը՝ սկեպտիկ հոգիի մը մէջ :

2 — Իսկ ԵՐՈՒՍԱՂԵՄ, ԵՐՈՒՍԱՂԵՄը կը մատնէ երաժշտական պարզուկ սէր մը միայն, որ այնքան մտերիմ է երրայական գրականութեան, երբեմն ուժգնութիւն տալու հա-

(*) Ցոլարձակումի այդ խաղին իբրեւ նըմոյշ՝ Լեռան բարկութիւնը հէֆեաքը լի հystérie թիվն, կամ երէ կ'ուզգէ՛ ռարսիստին դասական մէկ պատկերն է, ինչպէս Սոխակները՝ արքունիքին պատճառած հոգեկան կերպարանափոխութեան փառարանութիւնը, Եւա՛, Եւան՝ յաւիտենականութեան տենչին ընդդէմ վայրկեանի ապրումներուն վկայարանութիւնը, եւ այսպէս ամբողջ հասորը կը վարդապետէ տեսակ մը զգայապաշտութիւն, որ հանոյ կը համարի տառապանքին իմացումը :

մար խօսքին կամ թերեւս կախարդանք : Ուրեմն ,
այստեղ կրկնութիւնը դեր չի խաղար գործին
ներքին արժէքին տեսակէտով , ու չունի հետ-
նանքի աղը , զոր հայկական ոճը կը ստեղծէ նը-
ման կրկնութիւններով (*):

Ստիկա չի նշանակեր թէ գրական երաժշտ-
տութենէ մը զատ ուրիշ նպատակ չի հետա-
պնդեր հեղինակը : Այս անդամ վիսլերգութիւնը
փորձ մըն է , նուագն ու դրուագը միացնելով ,
համագրելու զգացումը մտածման հետ , — ու
ահա դէմ յանդիման այն վարդապետութեան ,
ինծի այնքան սիրելի , թէ պատմութիւնը ըն-
տրապաշտ (électrique) արարչագործութեան
կաթսայ մըն է , որ հակառակ այս վարդապե-
տութեան կարգ մը ախոյեաններուն տեսու-
թեան , հակառակ թէնի թշնամութեան , կը ձու-
լէ եւ կը համագրէ ոչ միշտ համաձայն բանա-
կանութեան , որ գիտէ զատորոշել , այլ եւ յա-
ճախ համաձայն բնազդին , որ չի գիտեր զատո-
րոշել (ասկէ՝ հարկը զոր տուինք , այս վիպեր-

(*) ԲԱՆԵ՛Ր , ԲԱՆԵ՛Ր , Ի՞՞Չ ԲԱՆԵՐ լսո-
րագիրն ունի իմ մէկ ուրիշ հատորս , իրատա-
րակելի , որ ընտրովի կատարուած այդ հայկա-
կան կրկնութեան մէջ կը դնէ հասկնալի բովան-
դակութիւն մը :

դութեան մէջ, հին քաղաքակրթութեան այնքան մտերիմ fatumին)։ Աւելորդ է դիտել տալ, որ արդի մշակոյթը կ'աշխատի մեծ չափով օգտագործել ընտրապաշտութեան երկրորդ եղբը, — նոյնիսկ յետպատերազմեան շրջանը, օրինակ՝ իր գերիրապաշտ շարժումով, հին բառով մը՝ բնազդին, նոր բառով մը՝ ենթադիտակցականին բերած իր պաշտամունքով, չափազանցութեան մէջ ինկաւ այնքան որ նոր դասականութիւն մը նշմարուեցաւ իբրեւ հակազդեցութիւն։



Ամփոփելով՝ այս վարդապետութիւնը կը հովանաւորէ ինչպէս ազդեցութիւներու գերը, դրականութեան մէջ, նոյնպէս բաղակցութեան երեւոյթը ժողովուրդներու մէջ, — այդպէս է որ կը զարդանան մշակոյթները եւ կ'ազնուանան ազգերը։

Ներողութիւն, ըսէք ինձ թէ ո՞ր ժողովուրդն է որ սնաներ եւ ապրեր է մէկ երակի արիւնով։

Ճիշտ է, միւս կողմէ, որ եղերերդութիւն մը ցնցեր է սիրտերը, ամէն անդամ որ պատ-

մութիւնը շարժեր է իր կաթսան խնոցի հարելու պէս (*):

Զեմ գիտեր ինչո՞ւ, Օսկար Ուայլտ յառաջարան չէրեց, երբ 1890ին առաջին անդամ կը հրատարակէր Տորիան Կրէյի Դիմանկարը: Յաջորդ տարի՝ միայն, Դիմանկարին յառաջարանը հրատարակեց պարբերականի մը մէջ, առանձին:

Մենք այս յառաջարանը կուտանք չորս տարի վերջ, երբ այլեւս յայտնի են ուրիշներու

(*) Թելադրելու համար այս խորհրդածութիւնները, հռավիմէական եւ երրայական քանակներու ընդհարումից ժամանակ՝ անոնց կը նակը դրի պատկեր մը մասիփէական վարդապետութենէն, որ ծանօթ էր Արեւելքի՝ աւելի առաջ ժան Մանէսը, թէեւ մասիփէութիւնը պիտի շողար պատմութեան երկնակամարին վրայ աւելի ուշ, Ե. դարուն, Ծշմարելի մինչեւ իսկ հայկական հորիզոնին վրայ, երբ պայքարի պիտի հրաւիրուէին Եզնիկը, Կորիւնը (որ «սատանայական» կ'անուանէր այդ վարդապետութիւնը) եւ Ղազար Փարպեցին, — թէեւ կարգ մը վկայութիւններ մեր պատմութեան՝ մէջ կը գտնեն անոր անկողինը աւելի կանուխ, «բորբոքիտոն» աղանդաւորներու հետքերուն վրայ:

խանդավառ տպաւորութիւնները, արտայայտ-
ուած՝ ընդհանրապէս chromoին մասին, որ պա-
տանեկութեան հոգեբնախօսական տուրքն է, —
կուտանք հիմա, խորհելով որ օգտակար կ'ըլ-
լայ որքան ԵՐՈՒՍԱԼԻՄին, նոյնքան ՄԵՂԵ-
ԴԻՆԵՐուն համար, վերլուծական տեսակէտով:



Այս վիպերգութիւնը, գրուած 1925ին,
առաջին անգամ տպուած է 1928ին, թեր-
թօնի ձեւով, Յառաջի մէջ (Փարիզ),
յետոյ Ազգարարի մէջ (Պոլիս), ի վերջոյ
Երկունքի մէջ (Փարիզ):

Այժմ Մարսիլիոյ Հայ Մշակութային
Միութիւնն է որ կը հրատարակէ զայն
գրքոյի ձեւով, իր հաշւոյն:

Երկունքի Վարչութիւնը ծրագրած
էր հրատարակել առանձին հատորով,
ատոր համար տաղանդաւոր արուեստա-
դէտը, նկարիչ Մելքոն Քէպապճեան,
կատարեց սքանչելի աշխատանք մը՝
տալով զարդարուխներ եւ գեղադիձ
ուխատառեր, ամէն գլուխէ վերջ ինք-
նատիպ զարդախաղեր, ինչպէս նաև
թափանցիկ տեսարաններ՝ տպուելու
համար, տաղբեր գոյնով, այն էջին վր-
րայ, ուր տիպուտառը կուտայ վիպեր-
ուութեան նորն այդ տեսարաններուն նը-
կարագրութիւնը: Բայց մեծածախո րլ-
րալով հրատարակութիւնը, յետաձդուե-
ցաւ :

Կը ներկայացնէ 60-70 քուականները
Քրիստոսէ ես

1970-1971
Year Book

Ա.

~~1088~~

~~749~~

— Կարմիր ամպերը, խաղողի խոշոր
ողկոյզներու նման, կը կախուին Սիոնի
լեռան վրայ: Ռամելա՛, առաւօտեան եր-
բորդ ժամն է գեռ, ու տե՛ս ո՞քան հե-
ռու մնաց Անաթովթ գիւղը: Անոր ճեր-
մակ տուները կը նմանին ոչխարի հօտի
մը, որ կը կորսուի, հետզհետէ, Սեմի-
րոնի լեռան ետին: Նայէ՛ գաւազանիս
ուղղութեամբ՝ Երաղի եւ Գարիզիմի
լեռներուն արանքէն, — Հովիտին մեծ
կաթսային մէջ, կրակէ ժայռերու նման,
կը ճարճատի Սիւքէմ քաղաքը: Առար-
ւան արե՛ւն է զարկեր վրան: Երաղի
լեռը կը դողդղայ վուշէ շինուած վրանի
մը պէս, առտուան ցօղերով բեռնաւոր:

A 78956

17



— Հունա՛, Թարոր լեռը, որ կը ծը-
փայ: Տե՛ս, ինչպէ՛ս ճանչցայ, Եօնա-
թա՛ն:

— Կը հասկնա՛մ, կը հասկնա՛մ:
Դուն ճանչցար անոր այն ձեւէն, որ նկա-
բագրուած է երրայտան հին աւանդու-
թիւններու գիրքին մէջ: Գրուած է թէ
Յեզրայելոնի գաշտին մէջ, ուր եղեամը
կը նստի ծեփի պէս, ստինքի մը նման
կորնթարդ է ան եւ կաթնածիր: Կը ծի-
ծաղի՛ս....

— Եօնաթա՛ն, կը մսիմ....

— Ինչու որ անօթի ես: Պահ մըն ալ
համբերէ, օ՛սիրականս, ահա կը սահի
առաւօտեան երրորդ ժամը: Ապիս ամ-
սուն մէջ ենք: Հոս, Մողինի բլուրին վր-
րաւ, հովը զով կ'ըլլայ Յորդանանի ջու-
րին չափ: Մէկ «շաբաթ» օրուան ճամ-
բաւ» եւս քալելէ վերջ, երուսաղէմի
սրբազն տեսարանին դէմ՝ զուն քու-
ծոմդ պիտի լուծես չօթով, տատրակի
միսով եւ Սաֆէտի յերան մեղրով: Այ-
ժըմ, դիտէ՛ տեսարանը: Օհօ՛յ, բլուրն
ի վար գոտի՛ կը քակեն նորածիլ եղես-
ուակն ու զոպան: Նշենին, վարր, արդէն
կը թափէ իր վաղարթուն աչքերը: Կը

լոե՞ս արտոյտին ձայնը, որ կուգայ եր-
կինքէն, վանկ առ վանկ: Կարծես ամ-
պերն են, որ կը բարախին: Կամ կուժ
մըն է, որ կը պարպուի: Ինչքա՞ն քնքուշ
է երկինքը այս պահուս, յստա՞կ եւ ան-
բիծ: Ճառադայթները երակներ կը գծին
անոր վրայ, այնքան որ մերկ մարմինի
մը պատրանքը կուտան: Հո՞ն, ամպի
մը փեռեկտած թեւն է, որ կը խաղայ
հովծփուն...:

— Խօսէ՛, Եօնաթա՞ն, Թեկուացի
հովիւ, քաղցը բանաստեղծ, եւ սիրա-
հանս իմ:

— Եւ տգեղ Երրայեցիս...: Այո՛,
տգեղ եմ, Ռատմելա՛, եւ տխուր: Տր-
խուր՝ որովհետեւ կը խորհիմ թէ տգեղ
երիտասարդը զրկուած է այն հմայքէն,
որ կը յաղթէ կեանքի դժուարութիւննե-
րուն: Քանինե՞ր կան, որոնք իրենց աչ-
քին մողութեամբ կամ ժպիտին քաղցրու-
թեամբ շահած են թանկադին յաջողու-
թիւններ: Ահա թէ ինչո՞ւ զրկուածները
կը դիմեն ուրիշ ճամբաներու, — իմաս-
տութեան: Գեղեցկութիւնէ զրկուած՝ ու-
զեցի իմաստութիւն վաստկիլ: Գիւղիս
հոմեղիալին մէջ ուսումնասիրեցի գեղե-

ցիկ աղօթքները, որոնք քերթողական
սլատկեցներ են, խորհուրդով թաթա-
ւուն: Ու գացի, յետոյ, սորվիլ դպրու-
թիւն Գաղգաղայի մարդարէական դըպ-
րոցներուն մէջ: Եւ, ինչպէս մաքուր եր-
րայեցի մը, գարձայ հովիւ, բնութեան
սիրահար: Այս արժանիքներով միայն
յաջողեցայ շահիլ սիրտդ, Ռամելա՛: Ու
քու շուքիդ մէջ, աղուր ներշնչումնե-
րով լեցուած, կը զգամ թէ երջանիկ եմ
ու զուարթ՝ սա չնորհալի գաշտապատ-
կերին պէս: Ոչինչ այնքան կախարդիչ
է, որքան գեղեցկութիւնը: Եւ կը տաք-
նամ ջերմութեամբն աչքերուդ, որոնք
կը նմանին մոգական քարերու: Ու կը
կշտանամ քաղցրութեամբը մատնե-
րուդ, որոնք կը նմանին մեղրի կաթիլ
ներու:

Բայց տե՛ս, ո՞րքան կը հրճուիմ դի-
տելով բնութիւնը. Հեռո՛ւն, Գեննեսար-
քէթի լիճին պաստառը օգոստոսեան
սպուղի գոյն ունի: Եւ կարմեղոս լեռը,
ճիշդ ինչպէս ամպ մը, կը սողոսկի գետ-
նին վրայէն դէպի Մեծ Ծով: Յորդա-
նան գե՛տը, որուն երկար պատմուճանը
կը սարսուայ հովէն:

— Եօնաթա'ն, երգէ՛ մէկը եթով-
պիտական սիրոյ այն քաղցր երգերէն, ո-
րոնցմէ, կ'ըսես, օգտուեցաւ Սողոմոն՝
իր հարձերուն ծոցին մէջ:

— Առազաստիդ գիշերը պիտի եր-
գեմ, նհիլոթի վրայ, քերթուածը, որ
կը սկսի սա տողերով.

Կուսական պորտդ քուկին
Նման է կարմիր կնիքին
Ամաբիոյ Թա'զաւորին . . .

— Երգէ՛, երգէ՛, ի՞նչպէս կ'երգեն ե-
թովպիտացի աղջիկները, ի՞նչպէս կ'եր-
գեն . . . : Ա՛հ, Եօնաթա'ն, տե՛ս, աշտա-
րակնե՛րը, ճերմակ աշտարակնե՛րը,
Ճիւնափառ նոճիներու նման երկնակար-
կառ . . .

— Օ՛, Ռամելա՛, Երուսաղէ՛մն է,
Երուսաղէ՛մն է: Վար իջիր աւանակէն:
Կախուէ՛ ուսիս վրայ:

Երկուքը մէկ բերան.

— Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, ճեր-
մա՛կ քաղաք, սրբազա՛ն օթեւան . . . :

Ծունկի եկած, կ'երգեն Սաղմոսը.

Առ զետս թարելացւց՝, անդ նստէամ եւ¹
լայամ, որպէս յիշեցամ մեմ անդ զՍիոն:

Ի մէջ ուռեաց նոցա կախեցամ զկտակա-
րանս մեր:

Անդ հարցանէին զերիչք մեր զբանս օրի-
նուրեան, զերեվարք մեր ասիակէին զմեզ եւ
ասէին. «Օրինեցէք մեզ յօրինութենէն Սիոնի»:

Խոկ զիա՞րդ օրինեցուք զօրինութիւնս
Տեառն յերկիր օտար:

Եթէ մոռացայց զբեզ, Երուսաղէմ, մո-
ռացի զիս աչ իմ: Կցեսցի լեզու իմ ի ֆիմս իմ
քէ ոչ յիշեցից զբեզ, քէ ոչ նախ նուազեցից
զբեզ, Երուսաղէմ, սկիզբն ուրախութեան ի-
մոյ:

— Ռամելա՛, կը տեսնե՞ս Դաւիթի
պալատը քաղաքագլխին վրայ, պարիս-
պէ պարոյրով, անիկա այնպէս է ինչ
պէս թագ մը՝ Սիոնի բարձունքին: Մա-
րիամնէի եւ Հիպոլիկոսի աշտարակնե-
րը, ճերմակ հագած քահանաներու նը-
ման, կը բարձրանան պարիսպին վրայ,

եւ դէմէ դէմ անկիւններէ՝ փառքը կ'եր-
գեն երկնքին։ Մեր առջեւն է Սեփինայի
աղուոր աշտարակը, որուն մէջքին կը
փաթթուին եօթը գօտիներ, գիշերը,
երբ եօթը յարկերէն հոսին լոյսերը։ Ա-
հաւասիկ, Ռամելա՛, ցանկալի տաճա-
րը։ Դիւրին է դանել անոր լիազունդ
գմբէթը, որ կը նմանի ճերմակ ամպէ-
մը։ Քովիկը, Անտոնիայի գղեակը, որ
Մորիա բլուրին վրայէն կը նայի Սիոնի,
իշխանուհիի մը նման։

Յանկարծ կը կենայ Եօնաթան, եւ,
գերազոյն յափշտակութեան մը մէջ
կ'արտասանէ։

— Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, քա-
ղաք աշտարակաց, փա՛ռք աննման պա-
րին չորս բլուրներուդ, Երուսաղէ՛մ ահա-
քեզի կը բերեմ սիրականս, Պասեքի տօ-
նին, Գալիլիոյ եւ Բերէայի ուխտաւոր-
ներէն առաջ, որպէսզի օրհնես անոր
մէջքը, զոր պիտի գրկեմ, եօթը շաբաթ
վերջ, հարսնիքիս դիշերը, միւրոբալա-
նոսով օծուած մահիմիս մէջ։ Ես, Թէ-
հուացի հովիւ, քու տաճարիդ կը բերեմ
եօթը քոյ Հերբոնի մեղք, աիկ մը գի-
նի, Հրէաստանի հօտերուն ամէնէն պա-

բարտ ոչխարը, եւ . . . զառնուկի պէս
քաղցր Ռամելա՞ս . . . : Ինչո՞ւ արցունք
կայ աչքերուդ մէջ, Ռամելա', Սարօնի
շուշանս: Դե՛հ, Երգենք Դաւիթի սաղ-
ժոսը: Ահա Երուսաղէմի պարիսպնե-
րուն տակն ենք արդէն:

Ու սաղմոս Երգելէն՝ անցան Կեդրո-
նի հեղեղատը եւ Հովտաց դռնէն մտան
Երուսաղէմ:

Բ.

Այժմ Ծամելա կը բնակի Ոփէլ թա-
ղը, ստորին քաղաքին մէջ, որ շին-
ուած է Ակայի ցած բլուրին վրայ։ Պա-
սեզի տօները գեռ չէին սկսած, եւ Եօ-
նաթան իր նշանածը թողլով պառաւ
աղջկան մը՝ Զերուղդայի տունը, շա-
րաթուան մը համար դարձաւ իր գիւղը,
թեկուա:

Երուսաղէմ կը պատրաստուէր մեծ
տօնին։ Սակայն երկու մեծ հոգեր կը
զբաղեցնէին քաղաքին իշխանութիւնը։

Հռովմայեցիներուն ծանր պահանջները
եւ Յոպակէի նաւահանգիստին առջեւ կա-
տարուած սպառնալիքները հետզհետէ
սարսափի կ'աղդէին իբեն։ Միւս կողմէ
բորոտութեան համաճարակը լուրջ վա-
խեր կը պատճառէր։ Որովհետեւ այս
պժպալի ախտը կ'ամայացնէր գիւղերն
ու քաղաքները, եւ երկրին իմաստունե-
րը չյաջողեցան երբեք գարման գտնել։
Եւ, Ովսիայի իշխանութեան տարին,
սրբազն տօնը յետաճգուեցաւ յաջորդ
թիար ամսուն, արգիլելու համար հա-
զարաւոր ուխտաւորներու խոնումը Ե-
րուսաղէմի մէջ։ Երրայական պատմու-
թեան մէջ չսպազանց բացառիկ որոշում
մըն էր այդ յետաճգումը։ Արգարեւ,
այնքա՞ն անզուսպ էր պաշտամունքի ըդ
դացումը, զոր այս ժողովուրդը կը պա-
հէր Երուսաղէմի տաճարին հանդէս։
Յեղային ատելութիւններն իսկ չմաշե-
ցուցին զայն։

Այս որոշման հետ, Սանհետրիմի
ժողովականները յայտարարեցին թէ
բորոտները այսահարներ են, զորս
պատժած է Եհովա։ Եւ կը հրամայէին
վարել զանոնք մարդոց մէջէն։ Այն ա-

տեն ճշմարիտ հալածանք մը սկսաւ բոլոր ախտավարակներուն, մորթային հիւանդութենէ տառապողներուն եւ կտսկածելիներուն դէմ: Պահ մը վախցուեցաւ, որ այրելու կը դատապարտեն դժբախտները: Սակայն բարբունիները, որոնք բժիշկի համբաւ ունէին, արգելափակեցին զանոնք Անտոնիայի բերդին գետնայարկին մէջ:

Այս բերդը, պալատի նման գեղեցիկ, կառուցուած էր չերովուէսի ջանքերով, տաճարին հիւսիսային կողմը: Կամարական գետնուղիով մը հաղորդակցութեան մէջ էր տաճարին արեւելեան դրան հետ: Եւ վերջերը՝ զինուորներու բնակութեան յատկացուած, պաշտոնելու համար տաճարը եւ քաղաքին արեւելեան տկար ու ցած պարիսպը, որուն մօտիկն էր:

Իրիկուն մը, Զերուդգա կը բացակայէր տունէն, եւ, Ռամելա, մինակ մը նացած, իր վախը մոռնալու համար՝ կը

կարդար Սողոմոնի քերթուածները։ Փո-
ղոցէն ճիչ մը լսեց։ Բորոտ կնիկ մը բըռ-
նած կը տանէին։ Հազիւ թէ լուսամու-
տին վարագոյրը քաշեց ու փեղկերը կը
բանար, դրան աղխը շարժեցաւ աղմու-
կով։ Սարսափահար ետին դարձաւ։ Ե-
րիտասարդ մը ներս մտեր՝ դուռը կը
դոցէր։

— Ինչո՞ւ ներս կուպաս, երխատ-
սա՛րդ, ես չեմ ճանչնար քեզ, մինակ եմ
ու կը վախնամ։

— Ուամելա՛...

— Ո՞վ իմացուց քեզի անունս։

— Ես Յիէլի մեծ քահանայալետին
դպիրն եմ։ Աղուոր, ճերմակ տուն մը
ունինք, հոս, ետեւի փողոցը։ Քեզ տե-
սայ առաջին անգամ հովիւի մը հետ,
շարաթ մը առաջ, երբ Յովսափատի ձո-
րէն կ'անցնէիք, իջնելով Զիթենեաց լեռ-
նէն։ Այս օրէն ի վեր կը սիրեմ քեզ, ո-
րովհետեւ դուն գեղեցիկ ես Սարայի
թագուհիին նման, եւ աչքերդ կը ծխան,
ինչպէս բուրվառը խորանին առջեւ։

— Երուսաղիմացի՛, զզո՛յշ, ես քաջ
Եօնաթանի նշանածն եմ։ Ան շուտով պի-

տի դառնայ գիւղէն եւ մենք Պատեքի տօնէն վերջ պիտի երթանք հարսնիք կատարելու գիւղը:

— Օ՛, Ռամելա՛ կը սիրեմ քեզ, ձը-
գէ՛ հովիւը, որ իր հօտն արածէ լեռնե-
րուն վրայ:

— Դուն շատ լաւ գիտես, որ հովիւը
յարգելի տիտղոս մըն է որ չունիս: Եօ-
նաթան իմաստուն մըն է: Հեռացի՛ր,
հիմա Զերուդգա կը դառնայ Ոչխարաց
Վաճառանոցէն, ուր գնաց ոչխար մը
զնելու տաճարին համար:

— Ռամելա՛, երբ համբուրեմ քու
րերանդ, դուն այլեւս պիտի չկարենաս
ուրիշ բան ըսել, բայց միայն կանչել ա-
նունս՝ Յովաթամ...

— Անծանօ՛թ, գիտցիր որ Եօթանան
երբեք այդ ձեւով չէ խօսած ինծի, երբ
դեռ նոր կը ձանչնար զիս: Պիղծ լեզու
մը ունիս դուն...:

— Ռամելա՛, ի զո՞ւր կը ճգնիս ու-
րանալ: Զես սիրել նշանածդ: Ես սպա-
սաւոր մըն եմ տաճարին: Երուսաղէմի
աղջիկները շատ կը ցանկան ունենալ ե-
րիտասարդ մը, որ կապուած բլյայ տա-
ճարին: Կը սիրեմ քեզ, ու երբ կը մօտե-

նամ քեզի, ոռղ մը կը սարսէ դիս, ինչ
պէս երբէք չի պատահիր՝ երբ կը մօտե-
նամ քահանայապետին նուիրական սպի-
տակ պատմուճանին։ Նոյն սարսուռով
է, որ կը գողաց ստինքդ, ինչպէս իւղին
լոյսը՝ աշտանակին մէջ։

— Ալ բա՛ւ է, բա՛ւ, Հեռացի՛ր, Հե-
մա կը վերապառնայ Զերուղդա։

— Օ՛, շունչդ կը թրթուայ թիթեռ-
նիկի մը նման, եւ ամբրոսիայի քաղցր
բոյր մը կը ծորի մարմինէդ։ Ինչո՞ւ,
ինչո՞ւ վար հակեր ևս վարսագեղ գլուխդ
եւ ձեռքերովդ ծածկեր քու կուրծքդ, ծա-
ղիկներու փունջ մը գրկելու ձեւով։

— Հեռացի՛ր, պիւահա՛ր, Հիննոնի
ձորին աղբանոցէն եօթանասունեւեօթն
անգամ աւելի պիղծ……

— Օ՛ բարկութիւն, օ՛ բարկութիւն
Հիւանդի……

— Հեռացի՛ր, Հեռացի՛ր որպէսզի
չաղաղակեմ……

— Օ՛ կատաղութիւն, օ՛ կատաղու-
թիւն այսահարի։ Բսե՞մ թէ ինչո՞ւ եկած
ես Երուսաղէմ, բսե՞մ քեզի թէ ինչո՞ւ,
այդքան մտահոգ, կը ծածկես կուրծքդ։
Բժշկուելո՞ւ կուղաս դուն, որովհետեւ

բորստութիւնը վարակած է քեզ։ Լուր
սլիտի տամ Անտոնիայի բերդին զօրապե-
տին։

Ռամելա, վախցած ու կատաղի,
— Մի՛ սպառնար, ա՛յ չար երիտա-
սարդ Երուսաղէմի, մարմինս մաքուր է,
ինչպէս ջուրը Յորդանանի, որ արծաթի
ոլէս կը թափի Սաֆէտ լերան ժայռե-
րէն։ Եւ իմ ստինքիս պառեկը նման է
հռովմէտկան նորատիսլ ոսկի դինարին,
որուն վրայ նկարուած է Կեսարին դլու-
խը ծիրանի։

Յովաթամ, չարութեամբ եւ կատա-
դութեամբ լեցուած, կիրքէն կուրա-
ցած, գուրս ելած էր արդէն։ Ռամելա,
յուսահատ, եւ սպառնալիքէն սարսա-
փած, ինկաւ գետինը՝ բարձին վրայ ու
լացա՛ւ, լացա՛ւ, երկար ստեն լացաւ։

Վարը դուռը բացուեցաւ ու գոց-
ուեցաւ։ Զերուղդա վերադարձած էր։

Դուռը դարձեալ բացուեցաւ եւ այս անգամ ազմուկով լեցաւ բակը։ Ռամելա դող ելաւ։ Զինուորներ էին։ Լսեց։

— Խաղաղութիւն քեզի, Զերուդղա՛, զուստը, զուստը Յմարէլի։ Յոյց տուր մեզի այն աղջիկը, որ բորսութեամբ վարակուած՝ տանդ մէջ է պահուած։

Զերուդղա, վախով եւ ապշութեամբ բռնուած, կրկնել տուաւ հրամանը։

— Թող հարաւի հովը Սիոնի պարիսպէն Կեդրոնի հեղեղատը նետէ զիս, եթէ համբոյր մը իսկ աղարտած ըլլայ Ռամելայի մարմինը, աւելի սոլիտար քան ծեփիը տաճարին։

Քիչ վերջ, սակայն, փողոցին մէջ լսուեցաւ ճիչը Ռամելայի, զոր, պատգարակի մը վրայ կապած, Անտոնիայի բերդը կը տանէին։

Եւ, իբրեւ ջահ վառած խէժին բոյ բովը յաղեցեալ մութին մէջէն, իը լըուէիր Զերուդղայի ճայնը, որ կ'ըսէր իր դրացիներուն։

— Լիբնա՛, Համուտա՛ղ, Յովհան-

նա՛, կ'երդուընցնեմ ձեզ Սելովամի մա-
քուր ջուրին վրայ, որ բարբունի նաթա-
ղիէլ հիմա պիտի արձակէ Ռամելան,
ինչու որ անոր մարմինը աղաւնիին մի-
սին նման արդար է եւ հաճոյատեսիլ:

Պ.

Անտոնիայի բերդին մութ գետնա-
յարկը լեցուած էր բորոտներով։

Բաբբունի Նաթաղիէլ աչք մը կը
պտըտցնէր այդ զոհերուն վրայ եւ ան-
ժիջապէս կ'արգելափակէր զանոնք։ Ու
զանազան, զարմանազան հիւանդու-
թիւններու ողջ պատկերներով խճողուե-
ցաւ ուրկանոցը։ Նախապէս դարմանե-
լու նպատակաւ փորձեր եղան, բայց երբ
ստուարացաւ հիւանդներու թիւը, ձը-
գեցին որ մեռնին։ Եւ այնուհետեւ մահն
էր, որ կը մաքրագործէր։

Յաճախ, պատահած մահերէն եւ
հոգեվարքներու սրտակեղեք հոնդիւն-
ներէն սարսափելով՝ այս դժբախտ ամ-

բոխը կ'ոռնար եւ կատաղութեամբ կը
յարձակէր գրան վրայ: Սակայն վայրե-
նի մարդ մըն էր դռնապանը, կը զսպէր
զանոնք ամենայն անգիտութեամբ: Միւս
կողմէ, զինուորները կը սպառնային
բազմաթիւ լուսամուտներէ, որոնք կա-
տուի մը գլուխին մեծութիւնը ունէին:
Իսկապէս ահաւոր էր տեսարանը:
Սրահը մայրիի տախտակէ պատով մը
բաժնուած էր երկու մասերու: Ահա կի-
ներու բաժինը.—Անկիւն մը կուրացած
բորոտը, ուռած քիթով եւ ականջով,
ճակատը ձեւազեղծուած՝ բազմաթիւ
կոշտերով, ափերը ճաթուտած, ինչպէս
հողը՝ երաշտ օրերուն: Անդամալոյծ
մը, չար ու տրտոփիկ, կուլայ եւ կը տըր-
տնջայ: Կին մը, տապաստի չարչարանք-
ներուն մէջ, մինչ բոցը կը թուչի երեսնե-
րէն՝ կ'աղաղակէ ողբագին: Սապատող
մը, որուն սրունքը տապկուած հաւի մը
պէս կարմրեր՝ ուռեր է, ու դեղին ծիր-
տի նման թարախը կը հոսի վէրքէն: Գի-
րուկ կնկան մը երեսին վրայ գարշելի
վէրք մը, բուշտ բուշտ դուրս տուած,
սեւ ու մածուցիկ, ճմլուած սեւ խաղողի
ողկոյզին նման: Կաթի երեխաներ, քըր-

տինքիսաշէն ու մէզէն երանքները բորբոքած:
Մատղաշ հարս մը, որուն ծոցը
ալիւրի նման բարակ ու ճերմակ փոշի
մըն է տեսնուեր: Գեղանի աղջնակ մը,
որուն երեսին վրայ խածուած համբոյրի
մը պէս կլոր բորբոքում մը կայ: Ման-
կամարդ կին մը, որուն աչքերը գոմէ-
շի աչքերու պէս դուրս ինկած են: Պա-
ռաւ մը, որուն ոտքերը չեն բոներ ու
կը միզէ առանց զգալու: Լուսնոտ աղջիկ
մը, որ տասն անդամ, ճշալով, դետին
կ'իյնայ եւ սպաննուած հաւի մը պէս կը
թափահարէ դետինը: Ու քարաքոսը, որ
քինը, գայլկեղը, ուրուկը, հոտող գաշ-
տանը, կոչկոռ կապած քոսը, ամէնքը
իրարու խառնուած: Ողջ ցուցահանդէս:

Իրիկուան պաշտամունքի իններորդ
ժամուն, տաճարին իմաստուն երգիչ
ներէն՝ Սովոնիա կուգար անոնց սոր-
վեցնելու Տէրոջ երգերը: Եւ անոնք, տը-
խուր եւ արտասուագին, հառաչանքով
ու պաղատանքով, կ'երգէին իրենց տուն

**տրուած սաղմոսները, վասն քաւութեան
եւ բժշկութեան:**

Սպառեցան որպէս ծուլս առուրք իմ, եւ
ոսկերք իմ որպէս խոխիւ չորացան :

Հարայ որպէս խոտ եւ ցամաֆեցաւ սիրտ
իմ, մոռացայ ուտել զհաց իմ:

Ի ձայնէ հեծուրեան իմոյ, կցեցաւ ոսկը
իմ ի մարմին իմ:

Նմանեցայ ես հաւալսան յանապատի . եղէ
ես որպէս բու յաւերակի :

Տքնեցայ եւ եղէ ես որպէս նննդուկ՝ միայն
ի տանիս :

Զմոլխիք որպէս զհաց կերայ, եւ զբմպելին
իմ արտասուօֆ խառնեցի :

Աւուրք իմ որպէս հովանի անցին, եւ ես
որպէս խոտ ցամաֆեցայ :

Ես որպէս զջուր հեղայ, եւ ցրուեցան ամե-
նայն ոսկերք իմ, եւ եղեւ սիրտ իմ որպէս մոռ
հսկեալ ի մէջ որովայնի իմոյ :

**Եօթը օրէ ի վեր Ռամելա, այդ տա-
րաբախտներուն մէջ, կուլար շարունակ,
ո'չ կ'ուտէր եւ ո'չ կը խմէր:**

Իրիկուն մը, երբ սովորական աղօթքէն եաքը Սովոնիա կը մեկնէր, մամէլա, դռնապանին անուշադիր մէկ վայրկեանէն օգտուելով, վազեց սրահէն դուրս, հասաւ Սովոնիայի եւ փաթթը մեցաւ անոր զեւտական լայն լոդիկին:

— Սովոնիա՛, աղուոր երիտասարդ, փրկէ՛ զիս, ես բորոս չե՛մ, նախանձորդ մը նետեց զիս այստեղ: Տե՛ս, գեղեցիկ եմ, ապրիլ կ'ուզեմ, աար քու սենեակդ, ազատէ զիս: Ծաղիկի պէս թարմ եմ, տե՛ս . . .

Ու գրկեց երիտասարդը՝ հակառակ անոր մերժումի կամ խուսափումի շարժումներուն, փաթթուեցաւ լայն ըզգեստին մէջ, հրեց զայն, յառաջ մղեց, եւ սանդուխէն վեր ելան: Մութին մէջ ամէն բան աննշմար անցած էր:

Սովոնիա, աղջկան ջերմ ու խանդակաթ խօսքերէն յուզուած ու թարմ գեղեցկութենէն թելադրուած, ուզեց ազատել զայն: Մանաւանդ որ աղջիկը զինք դրած էր ազատարարի ճամբուն մէջ, իրեն կը մնար լրացնել այլեւս: Ու, պաղարիւն, բերդին դրան մօտէն դարձաւ ետ, կամարակապ գետնուղիին մթու-

թեան մէջէն գնաց տաճարին կողմը: Եւ
դուրս ելաւ արեւելեան դուռնէն: Այժմ
փողոցն էին:

Ռամելա կը դողաբ:

Սովոնիա զայն տարաւ Բեզեթայի
թաղին մութ փողոցներուն մէջ, Քաղ-
ուէացի Նահար Սունէմէքի խանութը:

Ծերունի Քաղղէացին, յաջորդ առ-
տու, ծունկերուն վրայ առած գեղեցիկ
կատու մը, զոր Քրիստոպրաս կ'անուա-
նէր՝ ոսկեխայտ մուշտակ մը ունենա-
լուն համար, այսպէս խօսեցաւ Ռամե-
լայի.

— Երուսաղէմի հարաւային պարիս-
պին տակէն, Բրուտին լքուած դուռնէն
դուրս ելիր եւ զնա Մեռեալ ծովին ե-
զերքը, ճիշդ գէմը Երիքովի: Հոն, ցից
լեռներուն կողերուն վրայ քարանձաւ-
ներ կան, ուր գիշերները կը պառկիս
փաթթուելով վուշէ կտաւի մը մէջ: Վա-
րը, տաք հովիտին մէջ, այդիներ կան,
ու լերան մէջ թղենին, արմաւը, ձիթա-

պտուղը առատ է: Իմ մարդոցս հետ քեզի ուտելիք պիտի զբկեմ մինչեւ առաջ ջանալդ, համաձայն Սովոնիայի հրահանգներուն: Ծովուն եղերքի ծծմբական ու ձիւթախառն հողը շատ յարմար է ախտիդ բժշկութեան համար: Այդ տեղերը բազմաթիւ հիւանդներ կան, որոնց հետ կրնաս բարեկամանալ: Բնդհանրապէս պաշտպանեալներ են անոնք, եւ կապ ունին մեծ ընտանիքներու հետ: Սակայն չերթա՛ս դէպի արեւելք, — այնտեղ բորբոներու ամրոխ մը կայ, որ սագուռնական տօներ կը սարքէ: «Շարաթ» կը կոչեն այդ խնճոյքները: Քդ գո՛յշ, երեք չփորձուիս երթալ տեսնելու: Խորհէ միայն բժշկութեանդ մասին: Այս տիկին մէջ կը լեցնես, որթատունկին կոտրած ճիւղէն առնելով, երեք անգամ երեսուն արցունք եւ եօթանասունեւեօթը կաթիլ քափուրի ջուր: Ծովին եղերքէն վերցուր եօթը ափ սիկ: Ահա երեք ափ կաւ, եւ նոյնքան ալ ծըծումբ: Տիկին մէջ կը շաղուես այս բոլորը, ինչպէս կը հարեն կաթը խնոցիին մէջ: Կէս ժամէն խմոր կը դառնայ: Սեւորակ ձիւթի նմանող այդ խիւսը քը-

սէ քու մարմնոյդ՝ ամէն ցերեկ արեւին
տակ կակուզգնելէ վերջ միսդ։ Քոէ
այնքան բարակ, որքան ծեփը տաճա-
րին։ Յետոյ, դարձեալ, պառկէ մէկ
ժամ երկինքի ջերմութեան տակ։ Աւելի
վերջ կը լուացուիս ծովին ջուրով։ Երբ
աղէկնաս, ծովասաթէ քառամանեակիդ
կեդրոնէն կախէ այս ազնիւ քարը, որ բո-
րոտութեան դէմ զարմանալի զօրութիւն
մը ունի։ Կը տեսնե՞ս, կատուի մը աչ-
քին չափ խոշոր է, եւ եղեւինի ծիլի նման
դեղին։

Այսպէս, Ռամելա մեկնեցաւ Երու-
սաղէմի Հարաւային դուռնէն դէպէ
Մեռեալ ծովին եզերքը։

Պ.

Եօնաթան Երուսաղէմ դարձաւ, երբ
Ուամելա երկու օրէ ի վեր փախած էր
Մեռեալ ծովին եզերքը: Զերուղդա
պատմեց դժբախտութիւնը: Թեկուացի
հովիւը, կատաղութեամբ լեցուած, վա-
զեց ուրկանոցը՝ Անտոնիայի բերդը:

Անտոնիայի բերդապահը Սանհետ-
րիմէն խնդրեր էր բորստները փոխադրել
Նոր Քաղաքը, կառուցուած՝ Բեղեթայի
բլուրին վրայ, ուր Ագրիպանս, իր օրո-
վը, բանտ մը շինել տուած էր: Վասնզի
վախ կար, որ զինուուըները վարակուէին
ախտէն եւ տկարանար քաղաքին պաշտ-
պանութիւնը: Մանաւանդ որ տաճարին
հիւսիսային կողմէն պարիսպը կ'ամրաց-

ուէր ի նախատեսութիւն պատերազմի :
Անտոնիայի բերդը եօթը արմկաչափ ա-
ւելի պիտի բարձրացուէր : Հետեւաբար,
այս աշխատանքներուն համար, անհրա-
ժեշտ կը դառնար հիւանդներուն փո-
խադրութիւնը :

Քաղաքին իշխանութիւնը իր գլխա-
ւոր ուշադրութիւնը գարձուցած էր այս
բարձր թաղին ամբացման վրայ, ուզե-
լով անառիկ դիրքի մը հանդամանքը տալ
անոր : Թշնամիին առաջին յարձակումը,
օգտուելով դիմացի Զիթենեաց լեռան
տիրական դիրքէն, հաւանական էր, որ
տեղի ունենար այս կողմէն : Զինուո-
րական իշխանութիւնը անօգուտ կը նկա-
տէր զբաղիլ քաղաքին ստորին թաղե-
րուն ամբացումով, եւ, ժամ առաջ, կը
ջանար գործադրել իր ծրագիրը, քանի
հովվմէական լեգէոնները, «մարդկային
մակընթացութեան մը նման», ինչպէս
կ'անոււանէր Միհրդատ Պոնտացի, կը
հեղեղէին Մեծ ծովին եղերքները :

Եւ այդ օրը, ախտավարակ բան-
տարկեալները, պատգարակներու վրայ

բարձած, Ոչխարաց վաճառանոցէն կ'ի-
ջեցնէին դէպի Նոր Քաղաքին բանտը:
Բայց Եօնաթան չգտաւ անոնց մէջ իր
սիրականը: Քանի մը անդամ ուզեց խու-
ժել բերդէն ներս: Արդիլեցին, ծեծեցին
ու նախատեցին: Այն ատեն, եթովպիտ-
ու գերիներու նման, հայհոյեց՝ ամէ-
նո՛ւն, ամէնո՛ւն: Ու, Կապարաթայի մեծ
հրապարակին վրայ կանգնած, դէմը
տաճարին ու բերդին, կատաղութեամբ
պոռաց ամբոխին մէջէն, որ կը գիտէր
կոիւը եւ բորոտներուն տեղափոխու-
թիւնը: Հովիւը կարծես կը ճառէր հո-
մեղիային մէջ, վարդապետներուն դէմ.
— Երուսաղէմի'.

Ահա կը մարդարէանամ եւ քեզի դէմ
կ'արձակեմ ատելութեանս խօսքերը,
ինչպէս այս ափ մը աւազը, զոր կը թա-
փեմ մեծ հրապարակիդ վրայ:

Յոխո՛րտ քաղաք, որ կը նստիս ժո-
ղովուրդին ուսին, կը քաղես ու կը յա-
փըշտակես հեռաւոր գիւղերէն՝ ինչ որ
գեղեցիկ է ու թանկադին, եւ կը պար-
ծենաս թէ զո՛ւն ես քաղաքը քաղաքնե-
րուն, գեղեցիկը գեղեցիկներուն:

Դո՛ւն, որ երբեք չհաճեցար սեղան

նստիլ աղքատ գիւղացիներուն ու տկլոր
զաւակներուդ հետ :

Վա՛յ քեզ, ճերմա՛կ քաղաք, որով-
հետեւ արիւնը պիտի ներկէ աշտարակ-
ներդ :

Վա՛յ քեզ, հոյատեսիլ քաղաք, որ-
ովհնետեւ հրդեհը քարուքանդ պիտի ը-
նէ հիմերդ :

Ոչ ոք պիտի վազէ փրկութեանդ,
որովհետեւ դուն գողցար հարսը երիտա-
սարդին ծոցէն, զաւակը մօր գրկէն,
բերքը գիւղացիին շտեմարանէն :

Ինչ որ ըրիր ուրիշին, պիտի պատա-
հի քեզի :

Պիտի կործանի՛ս, Երուսաղէ՛մ, եւ
տաճարիդ տեղը պիտի հերկուի ինչպէս
արտ մը :

Ահա արտասանեցի իմ անվրէպ մար-
դարէութիւնս :

Այդ պահուն հասաւ բերդին զօրա-
պետը, Բարզափրան, երկարահասակ ու
խստադէմ մարդ մը :

Զեռքը ճերմակ աղաւնի մը բռնած՝
բերդ կը մտնէր, երբ տեսաւ Կապպաթա-

յի հրապարակին վրայ խռնուած ամբու-
լսը, ու խիստ հետաքրքիր՝ մօտեցաւ.

— Ի՞նչ կը բարբանջէ այդ խրտուի-
լակը, լոեցուցէք զայն եւ ցրուեցէք ամ-
բոխը, հրամայեց զինուորներուն:

Եօնաթան, տեսնելով զօրապետը,
յարձակեցաւ վրան ու պոռաց.

— Դո՞ւն, սո՛ւս մարդ, աւելի անը-
շան քան բարտիին երկար բարակ շուքը
Յորդանանի հովիտին մէջ:

Ու թքաւ: Այն ատեն Բարզափրան
նշան ըրաւ, եւ եօթը զինուոր մէկ վաղե-
ցին:

— Հաստ ձողէ մը գլխիվայր կախե-
ցէք եւ քաղաքէն դուրս հանեցէք:

Եւ ըերդին վրայ աշխատող գործա-
ւորներուն հրամայեց թիերով աւազ թա-
փել սմբռիսին վրայ, ցրուելու համար:

Զինուորները շատ դժուարութիւն
կրեցին կապելու համար հուժկու հովի-
ւին թեւերը: Յետոյ ոտքերը կապեցին
ձողի մը վրայ, գլխիվայր կախեցին,
օրօրելով դուրս հանեցին Բրուտին դուռ-
նէն եւ արձակեցին Կեդրոնի հեղեղատին
մէջ: Եօնաթանի դէմքն ու աչքերը արիւ-
նով խռնուած էին: Ցաւէն, ամօթէն ու

կատաղութենէն կուլար: Այնքա՞ն սպա-
ռած էր ուժը: Ցից ճամբայէ մը, որ կը
քերէ Ակեղղամայի անվար հողը, վեր
ելաւ, բլուրին վրայ: Արեւը մարը կը
մտնէր: Թուսիի մը մօտէն անցած պա-
հուն, յանկարծ նստաւ, կարծես յիշա-
տակ մը կը կանչէր իրեն: Գլուխը հանգ-
չեցուց ծունկերուն վրայ, եւ երկա՛ր լա-
ցաւ յուսահատ: Անշարժ կը քնանար,
երբ Անազէի բլուրէն իջաւ գիւղին ըստ-
ուարաթիւ հօտը: Շուները սկսան հա-
ջել, եւ ոչխարները խրտչելով փախան:
Հովիւը հազճեպով վագեց եկաւ: Ցու-
պովը մեղմօրէն զարկաւ Եօնաթանի ոտ-
քերուն: Հեղնանքով ըստաւ.

— Անծանօ՛թ, չեմ ուզեր իմաննալ
ցաւդ, սակայն կ'արթնցնեմ քեզ, որպէս-
ովի հեռանաս այստեղէն, չխրտչեցնելու
համար խաղաղ հօտս, որ կ'արածի ան-
գիտակ՝ ցաւին եւ մտածումին:

Եօնաթան բարձրացուց գլուխը, աչ-
քերը կարմրեր ուռեր էին: Եւ առանց
ճայն հանելու, ոտքի ելաւ, շարունակեց
ճամբան:

Յանկարծ ետ նայեցաւ: Հովիւը եւ
իր հօտը իջեր էին ձորին մէջ: Հեռուէն

Երուսաղէմի աշտարակները, իրիկուան
լոյսով թրջուած, պրիսմակի մը մէջէն
տեսնուած հեռաւոր դունեղ պատկերի
մը պէս, կը չողային երկնքին վրայ:

Սպառնագին, խենթի պէս, պոռաց.
— Իժերո՞ւ քաղաք . . .

Եւ արագ քայլերով սկսաւ հեռա-
նալ, երբ քաղաք դարձող խումբ մը տը-
ղաք, անոր զարմանալի շարժումները
գիտելէ վերջ, քար կը նետէին ետեւէն:

Ե.

Մեռեալ ծովուն արեւելեան եղերք-
ները ամայի են: Այդ կողմը հետզհետէ
կը բարձրանայ երկիրը եւ լեռնաշղթա-
յով մը կը բաժնէ արարական անապատը
Քանանու երկրէն: Երուսաղէմի փախըս-
տականները կ'ապաստանէին այդ բար-
ձրութիւններուն վրայ, զորս կը կազմեն
Նեփթաղէմի, Եփրեմի եւ Յուղայի լեռ-
լերը ուս ուսի:

Բորոտներու հալածանքի տարին,
Հազարաւոր հիւանդներ ապաստանեցան
այդ անառիկ դիրքերուն վրայ: Մեռեալ
ծովուն անմիջապէս արեւելքը կը դրա-

ւէին այն բորոտները, որոնք պաշտպան-
ւած էին Երուսաղիմացի ընտանիքներու
կողմէ: Գաղտնի եւ կանոնաւոր հաղոր-
դակցութիւն մը կար այդ դժբախտնե-
րուն եւ քաղաքին միջեւ: Աւելի արե-
ւելք, լեռներէն սկսեալ մինչեւ Քոքար
գետը, Բասանի, Բերէայի, Գաղաադի
բարձր Հովիտներուն մէջ, եւ հարաւ իջ-
նելով՝ մինչեւ Ամոնացւոց, Մովաբաց-
ւոց եւ Եղովմայեցւոց սահմանները,
վրան զարկած էր ժողովուրդը որ վր-
տարուած էր քաղաքէն:

Այդ շրջանը հետզհետէ վտանգաւոր
իր դառնար Երուսաղէմի ապահովու-
թեան համար: Դեկապոլիս կը մերժէր
Հնազանդիլ Երուսաղէմի, եւ Բասան այր
եւս դորեն չէր դրկեր: Միւս կողմէ, Ե-
րուսաղիմացիները կը պնդէին թէ Հովմ-
այեցիները մարդ կը դրկէին բորոտ ժո-
ղովուրդին մէջ, սադուռնական ինճուրը
ներ կը սարքէին եւ ընկերային կազմա-
րութման նպատառող վարդապետութիւնը
ներ կը քարոզէին: Ուստի զինուորա-
կան Հսկողութեան տակ առին Յորդա-
նանու Հովիտը, չէզոքացնելու համար
շրջանը:

Սակայն, ինչպէս ամէն իշխանութիւն՝ Երուսաղէմի կառավարութիւնն ալ մեղսակիցներ ունէր իր ծոցին մէջ։ Այդ մեղսակիցները ամէն ճիդ թափեցին, որ ազատ մնայ Երուսաղէմէն Երիքով տանող ճամբան։ Ամէն օր մասնաւոր մարդիկ կը կտրէին այդ 20 մղոնի հեռաւորութիւնը, Երիքովէն կ'անցնէին դիմաց, դտնելու համար պաշտպանեալ բորոտները։

Անոնց մէջ էր Ռամելա։

Ան ծանօթացած էր երկու կիներու, որոնք կը կոչուէին Տաթարիա եւ Սուրա։ Փոխողիացի էր Սուրա, ճամբորդած էր զանազան քաղաքներ, ի վերջոյ Բեթուայիդայի մէջ ամուսնացեր էր մաքաւորի մը հետ, եւ անցեր Երուսաղէմ։ Թիար ամսուն, ջերմի մը պատճառաւ, անկողին ինկաւ։ Ամուսինը, վախնալով որ կը ձերբակալեն, զայն փախցուց Մեռեալ ծովուն եզերքը։ Սուրա չափազանց խելացի էր, գիտէր Երուսաղէմի պատմութիւնը եւ աշխարհագրական լայն ծառօթութիւններ ունէր։ Զանազան աղանդ-

ներու եւ կրօնական ծիսակատարութիւն-
ներու մասին ապշեցուցիչ նկարագրու-
թիւններ կ'ընէր իր ընկերուհիներուն:
Պերճախօս էր եւ իր թուխ ու տաք շրթ-
ներուն մէջ բառերը հաճելի հնչում մը
կը ստանային:

Գեղանի աղջիկ մըն էր Տաթարիա:
Բուն անունով կը կոչուէր Ռում, սու-
կայն տարօրինակ ու խենթեցնող գեղեց-
կութեանը պատճառաւ, անոր տուեր էին
Սողոմոնի աղջկան անունը: Երուսաղէ-
մի մէջ եօթը սիրահարներ կոխւ կ'ընէին
կին առնելու համար Տաթարիան:

Հայրը, վախնալով որ սիրահար ո-
սոխներէն մէկը բորսութեամբ կ'ամ-
րաստանէ զայն, — բան մը որ սովորա-
կան էր դարձած Երուսաղէմի մէջ, այդ
օրերուն, — խոհեմութիւն համարած էր
փախցնել Մեռեալ ծովին եղերքը:

Առտու մը, երեք գեղուհիները բար-
ձրացան բլուրներն ի վեր, զիտելու հա-
մար Երուսաղէմի անթիւ աշտարակնե-
րը: Նստան վայրի այգիի մը մէջ, մոլա-
թզենիի մը շուքին տակ: Յստակ էր օդը

Եւ բուրումնաւէտ։ Բեւեկնիներուն, նո-
ճիներուն եւ հնդկանշիին հոտը սաստ-
կութիւն մը կը ստանար արեւին ջերմու-
թենէն։

Պահ մը դիտեցին տեսարանը, որ,
գարնան այդ եղանակին, գեղեցկութեան
լրութիւն մը կը ցուցադրէր։

// Սուրա խօսեցաւ.

— Ահա Մեռեալ ծովը, կուպրէ տախ-
տակի մը նման։ Յորդանան ողջ սնդիկի
փայլ մը ունի կանանչ հովիտին մէջ։
Եզերքը կը բարձրանայ նազելի պալատը
Ամաթայի, ջուրէն ելած թագուհիի մը
նման։ Ու արեւին փոշիին մէջ, հեռո՛ւն,
աշտարակները, որ կը բարձրանան սպի-
տակ ծուխերու պէս։ Զորս բլուրնե՛րը,
որ սպակ կը կազմէն՝ միացնելով իրենց
ուսերը, — քաղա՛քն է ան, որուն անունը
երաժշտութեան մը պէս է։ Արտասանե-
ցէ՛ք, արտասանեցէ՛ք։

— Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, կան-
չեցին երեքը միաբերան, երդի մը թըր-
թոռումով եւ յուղումի մը յորդումով։

Եւ երեք գեղուհիները հակեցին ի-
րենց գլուխները ու լացին։

— Տեսէ՛ք տաճարը, շարունակեց
Սուրա քիչ մը հաք: Ա-ամելա՛, տեսէ՞ր ես
զայն մօտէն, չորս գուռներ կը բացուին
Հիւսիսային կողմէն եւ չորս գուռներ՝
Հարաւային կողմէն: Տեսէ՞ր ես բարե-
լական գորգերը, որ կը զարդարեն պա-
տերը: Երեք գոյներ կը խաղան այդ գոր-
գերուն հէնքին մէջ, — կապոյտը կը
խորհրդանշէ երկինքը, ծիրանին ծովը,
բոսորը՝ կրակը: Եւ վուշը, որ թել կը
նետէ այդ կոյներուն մէջ, կը խորհրդա-
նշէ երկիրը: Երուսաղէմ աղջիկ մըն է,
որ ծնած է Եգիպտասի եւ Բարելոնի զու-
գաւորութենէն: Ահա թէ ինչո՞ւ իր տա-
ճարը կը նմանի բարելական այն մեհ-
եաններուն, որոնք նուիրուած էին Աստ-
ղիկին: Առաջ Երուսաղէմի րլուրներուն
վրայ բարձրացան Սուկկոթ-Բենովթնե-
րը, բարելական աստուածուհիներուն
մեհեանները, զորս կը կոչէին «աղջիկ-
ներու վրաններ»: Այժմ վրանաձեւ մեհ-
եաններուն տեղ կ'երեւի երբայական տա-
ճարը: Եգիպտական ծէսերը, միւս կող-
մէ, տուին իրենց պերճ զգեստները:
Այսպէ՛ս գեղեցկացաւ Երուսաղէմ: Յա-
փշտակելով գեղեցկութիւնը, զոր տեսաւ

ուրիշին տանը մէջ: Ինչո՞ւ այս երկու
դասակարգերը, գեղեցիկն ու տգեղը,
որոնք կը ստեղծեն յաւիտենական կը-
ռիւը: Ամէն աղջիկ կ'ուզէ աւելի գե-
ղեցկանալ, եւ ամուսնանալ՝ գեղեցիկին
հետ: Եւ ան, որ տղեղ ծնած է, կը չա-
րանայ: Դժբախտութիւնը կը հասնի
չուառով: Երուսաղէմ գեղեցկացաւ եւ
նախանձ շարժեց: Ահա Տիտոսի բանակ-
ները կ'արշաւեն, տիրանալու համար գե-
ղեցիկ քաղաքին: Ու պիտի կործանի՛
գեղեցիկ քաղաքը, այդ կռիւին հետե-
ւանքով:

Կ'ըսեն թէ մեր կոնակը, բորոտ ժո-
ղովուրդին մէջ կը ծաւալի նոր կրօնք
մը: Տգեղութեան պաշտամունքն է այն,
որ կը քարոզուի այնտեղ: Ոմանք չարա-
մտութեամբ, կը պնդեն թէ բարելոնեան
գեւ մը կը կառավարէ այդ հաւատաց-
եալները, որոնք շաբաթ գիշերները կը
հաւաքուին խնճոյքի: Կ'ուզէ՞ք, զադո-
նի, ներկայ գտնուիլ «Շաբաթ»ին:

— Կ'ուզէնք, ըսին Տաթարիս եւ Ռա-
մելա՝ կնոջական հետաքրքրութենէ մըդ-
ւած:

— Այս շաբաթ, ուրեմն:

Որոշումը տալէ վերջ, դեռ երկար
ատեն անոնց նայուածքը չբաժնուեցաւ
Երուսաղէմէն:

Իրիկուան դէմ, Երբ կապտորակ կեռ-
նեխները, սարեակներն ու տատրակները
կը սկսէին իրենց մեղեգին մոշայի եւ
ծուաղենիի թուփերուն մէջ, կարօտով
համբո՛յը զրկեցին Երուսաղէմի եւ բը-
լուրէն իջան վար, դէսլի թաքստոցը, Ե-
րարու փաթթուած, տիսրութեան մէջ
թաթաւուն :

Փ.

Այն «Շարաթ»ուան երեկոյին, կա-
նուխ, խնձոյքի եկեր էին բորոտները:
Բազմութիւնը աւելցած էր կրկնապէս,
բաղդատմամբ նախորդ «Շարաթ»ին:
Իրբեւ ժողովատեղի նշանակուած
էր, այս անգամ, Բասանի տափարակ ա-
րօտներուն եւ Նեփիթաղէմի ուղղածիդ
լերան կազմած անկիւնը: Հսկայ ժայռ
մը ամփիթատրոնի նման կը բարձրանար
դէպի լեռը: Իսկապէս ծանր տպաւորու-
թիւն մը կը գործէր ապառաժը, որուն
ճակատին տակ բացուած խոռոչները,
հրէշային մութ աչքերունման, սպառնա-
դին կը նայէին միամիտ ժողովուրդին:
Գիշերը, խնձոյքի պահուն, գունաւոր

բոցեր կը ժայթքէին այդ պայթած ե-
րակներէն եւ տխուր լոյսով մը կ'ոռո-
գէին արօտները:

Լուսնկան ելեր էր արդէն:
Մարգագետնին վրայ խումբ խումբ
սեղան նստեր էր ժողովուրդը:

Ճաշերը կը սկսէին Եբբայեցիներու
աւանդական ճաշով, — աղ, սխոսոր ու
հաց, որուն կը յաջորդէր գինին, զոր կը
խմէին առատ ու անվերջ: Յետոյ կը
սկսէր բուն ճաշը, որ կը բաղկանար ձըկ-
նեղէն, մսեղէն եւ խմորեղէն բազմատե-
սակ կերակուրներէ: Երուսաղէմի մէջ
չարամտութեամբ տարածուած էր զրոյ-
ցը թէ այդ «Շաբաթ»ներուն ընթացքին՝
բորոտները կ'ուտէին չթլիատուած ե-
րեխաններու սիրտ ու լեարդ միայն:

Կարելի չէր ստուգել թէ ո'րքան ճիշդ
էին այդ զբոյցները, ինչպէս կարելի չէր
հասկնալ թէ ո'վ կը կատարէր գիշերա-
յին այդ տօներուն հսկայական ծախքե-
րը: Հոռվմայեցիներն են, — կ'ը-

սէին Երուսաղիմացիները, — որ կ'ուզեն
շահիլ ժողովուրդը ի հեծուկս Երուսա-
ղէմի: Եւ սակայն Եբրայական իշխա-
նութիւնը ոչինչ ըրաւ արգիլելու հա-
մար, որովհետեւ այլեւս կորսուած կը
նկատէր բորոտութեամբ վարակուած
այդ բազմութիւնը: Միւս կողմէ պնդող-
ներ կային թէ բարելական կրօնքի մը
քարոզիչներն են, որ կը սարքեն սա-
դուռնական խնճոյքներ, որսալու համար
անտէր ժողովուրդը:

Արդարեւ կէս-կրօնական, կէս-քաղա-
քական իմաստ մը կար այդ հաւաքոյթ-
ներուն մէջ, որոնք կը կատարուէին ա-
մէն շաբաթ իրիկուն եւ կը վերջանային
յաջորդ առաւօտ:

Երբ ճաշերը վերջացան, լուսնկան
հարիւր եղէդ հեռացեր էր հորիզոնէն:

Ժողովուրդը ոտքի ելաւ եւ սկսաւ
ման գալ: Պարերը կազմուեցան անմիջա-
պէս՝ երբ նուազածուներ նշանակուե-
ցան, եւ ուրախութեան ու հրճուանքի
ազաղակները արձագանգեցին լերան
կողերուն վրայ:

Բարձրը, սպառնացայտ ապառաժին
կեդրոնը, հարիւրամեայ թզենիի մը
տակ շտկուած էր գեղեցիկ վրան մը։ Եր-
կու սիւներու վրայ, լայնալիճ անօթնե-
րու մէջ կը վառէր խիժային բոց մը,
որ ցերեկի պէս կը լուսաւորէր չորս դին։
Վրանին վարագոյրին մէջէն կը տեսնը
մէր սեւ պաճուճապատանք մը, որ կը
ներկայացնէր բարելական Սաղայէլը։
Ու հոն, ուր ժողովրդեան մասնիկ մը
կար, կուպրի եւ բուսային խէժերու բո-
ցեր լոյս կը սփռէին եւ մթնոլորտը
կը յագեցնէին տարօրինակ հոտերով։
Հաւաքատեղիին սահմանին վրայ մաս-
նաւոր մարդիկ կը հսկէին, որպէսզի օ-
տար մը չմտնէ ներս եւ չխառնուի ժո-
ղովուրդին։ Մասնաւոր նշաններ կային,
որոնցմով կը ճանչնային «Շարաթ»ներու
հաւատացեալները։

Ու երբ գիշերը կէս կ'ըլլար, պարերը
եւ հաճոյքի խաղերը այլեւս կ'անցնէին
սովորական սահմանները։ Սրինգի, տա-
ւիղի եւ հեթանոս երդերու ձայնին մէջ
մերկ աղջիկներ կը պարէին, գծելով
կիրքի եւ կտղուցի ամէն շարժում։
Մատղաշ մարգագետնին վրայ լուսնոտի

նման կը փոռւէին մանչ ու աղջիկ, ձու-
կի պէս մերկ եւ որդերու պէս իրարու
փաթթուած։ Ոչինչ մերժելի էր, ամէն
բան հրամայուած էր, եւ հաւատացեալ-
ները կը հպատակէին յօժարութեամք։
Իշխանուհիներու նման ծպտուած կիներ
հրապարակ կուգային եւ կը զուգաւոր-
ուէին կաղերու, կոյրերու եւ հաշման-
դամներու հետ, ժողովուրդին աչքին
առջեւ, ընդհանուրին քրքիչին տակ։
Այսպիսի թատերական վրիժառութիւն
մը կը գոհացնէր իրենց թշնամութիւնը,
զոր ունէին գեղեցիկ ու բարեկեցիկ դա-
սակարդին դէմ։

Երբ հաւերը կանչեցին առաջին ան-
գամ հեռաւոր գիւղերէն, Սաղայէլին
բերանը բացուեցաւ օձի պէս, բոց մը
թռաւ շրթներէն երեք անգամ։ Եւ ժողո-
վուրդը փոռուեցաւ գետին։ Այժմ որոշա-
կի կը տեսնուէր Սաղայէլը, կանզնած
բարձրը, վրանին սեմին վրայ։ Խոյի գը-
լուի մը ունէր, եւ երկու սեւ կոտոշ, “
բոնք դէպի ետեւ կը ծոէին աղեղի նման։
Մանր աչքեր եւ գեղեցիկ ճակատ մը։

Բարակ ու երկար՝ ասպետի նման ոլացիկ էր ան։ Երբ աջ ձեռքը տարածեց, օդին մէջ, գէպի ժողովուրդը, տեսնը ւեցաւ որ ճկութը կեռի նման է եւ բաժնը բաժն։

Այս էր այն աստուածը, զոր կը պաշտէին դժբախտները վրէժինդրական յափշտակութեամբ մը։ Ան «միւս աստուած»ն էր, ինչպէս կ'ըսէր Արեւելքի ժողովուրդը։

Արեւելքի մէջ բոլոր կրօնքները ափեղերքը կը բաժնէին ու կուտային երկու ոդիներու։ Մէկ կողմը կը տիրէր Բարիին աստուածը, միւս կողմը՝ Զարին աստուածը։ Եղաւ ատեն մը, երբ տարբեր անուանակոչութիւն մը ստացան անոնք։ Գեղեցիկին աստուածը եւ տգեղին աստուածը։ Հելլէն քաղաքակրթութիւնը, երկար ատեն, իր գեղեցկապաշտ կրօնքով ամբարտաւանացած, անարգեց Արեւելքը, որ կը պաշտէր միայն իմաստութիւնը իր տգեղ պատեանին մէջ։ Այդ քաղաքակրթութիւնները, այսպէս, պատրաստեցին երկու դասակարգ, —

գեղեցիկն ու տգեղը, (կենդանիները
չունին գեղեցիկի եւ տգեղի դասակար-
գումը): Եւ սկսաւ եղերական պատմու-
թիւն մը, սլարզ արդիւնքն զգացումի եւ
մտածումի պայքարին: Եւ այդ պատմու-
թիւնը, որուն մէկ էջն է այս, այնքան
կատարեալ ըրաւ եղերականութիւնը,
որքան երկու դասակարգերը պահանջե-
ցին ջնջել մէկն ու միւսը: Ոչ ոք մտածեց
ձուլել այդ դասակարգերը, առանց ար-
պահովելու մէկուն կամ միւսին տիրա-
պետութիւնը: Բնութիւնը, որ պատկերն
իսկ է նկարագիրներու, ցեղերու եւ ու-
ժերու զուգաւորման, զանազան հոսանք-
ներու բաղակցութեան կամ համագրու-
թեան՝ ի խնդիր նոր նկարագրի մը կամ
ցեղի մը, երբեք չյաջողեցաւ միացնել
այդ բեւեռները:

Եւ Զարիքին ասսուածը, Սաղայէլ,
առաւ կնոջական դէմք, կենդանական
կերպարանք, հագաւ ամէն կեղծիք, որ-
սալու համար ժողովուրդը: Ուզեց զին-
ուորագրել նոյնիսկ դժբախտ բորսանե-
րը, որոնք վոնտուած էին երուսաղէմէն
ու քաղաքներէն:

Անուշ էր ձայնը Սագայէլին, որ կը
խօսէր կարծես փողի մը մէջէն։ Թերեւս
այդ կրօնքին մէկ քուրմն էր, որ Սագա-
յէլին կերպարանքին ետեւէն, փողով կը
խօսէր, ձայնը հասցնելու համար մինչեւ
հեռաւոր հաւատացեալը։

Ան ինձոյք խոստացաւ ամէն Շա-
րաթ։ Եւ նկարագրեց բոլոր այն հաճոյք-
ները, խէնէշ ու պադշոտ, որոնք կը սար-
քուէին միայն հարուստ եւ թաւչային
անկողիններու մէջ, ուր կը բարախեն ու
կը գալարուին բոցի պէս գեղեցիկ մար-
միններ։ Բոլոր այդ վայելքները կը
նուիրէր «իր» ժողովուրդին։ Եւ կը ըս-
տառնար հարուստ եւ աղուոր քաղաքնե-
րուն, որոնք զրկած են գժրախտները ա-
մէն հաճոյքէ։ Կը քաջալերէր զանոնք,
նախանձ կը կաթեցնէր անոնց սրտին
մէջ, անդթութիւն կը սերմանէր եւ յար-
ձակման կը հրաւիրէր։

— Գացէ'ք, ամէն Շարաթէ վերջ գա-
ցէ'ք տարածել Զարիքը քաղաքներուն
մէջ։ Վարակեցէ'ք հիւանդութեամբ,
տանջեցէ'ք ախտերով, պատժեցէ'ք ան-
դթութեամբ . . .

Սուր ճիշեր, որոնք բղիկ բղիկ կ'ըւ
լային, ընդհատեցին Սաղայէլին ճառը:
Խումբ մը մարդիկ յառաջ եկան: Երեք
աղջիկներ կային անսնցմէ երեքին կոնա-
կին վրայ:

Մէկը պոռաց.

— Հիւսիսային ժայռերուն մօտ ա-
պաստանած էին եւ զաղտնօրէն կը դե-
տէին մեր խնձոյքը:

Ժայռին գաղաթէն արձակուեցաւ
բոցէ նշան մը, որ կը հրամայէր գերու-
հիները տանիլ վրանին տակ: Սակայն
հաղիւ թէ աղջիկները հասած էին ժայ-
ռին ստորոտը, երբ վայրագ երիտար-
սարդներ յարձակեցան աղջիկներուն վր-
րայ եւ բոնարարեցին: Այն ատեն ժայ-
ռէն վար վաղեցին խումբ մը մարդիկ,
որոնք մինչեւ այդ՝ անտեսանելի էին, ա-
նոնք տարբեր զգեստներ կը կրէին, —
թերեւս կրօնքին սպասաւորներն ու իշ-
խանտւորներն էին: Ազատեցին եւ առին
աղջիկները, որոնք բոնարարումին հե-
տեւանքով ուշաթափ ինկեր էին դետին:
եւ տարին ժայռին գաղաթը:

Սաղայէլ շարունակեց իր ճառը:
Խօսեցաւ չարութեան ներքին բովանդա-
կութեան եւ պատմական կարեւորու-
թեան մասին, բացատրեց բնազգը, որ
պիտի կազմէ նկարագիրը, եւ որ ուրիշ
բան չէ, ըստ, եթէ ոչ իմաստութիւնը,
չտաշուած ու տգեղ: Ան կը մղէ անհամար
չարութիւն ընելու ուրիշին, տիրելու եւ
տիրապետելու համար միայն:

Այսպէ՞ս կ'ուսուցանէր Սաղայէլ
«իր» ժողովուրդին: Եւ յետոյ կեռ ճը-
կոյթ մատին պողպատէ եղունգով, կը-
բակին մէջ տաքցնելէ վերջ, նշան կը գը-
ծէր նոր հաւատացեալներուն մարմինին
վրայ: Եւ խնձոյքը կ'աւարտէր երրորդ
հաւախօսին, երբ կը մարէին լոյսերը
յանկարծակի եւ ժողովուրդը կը մեկնէր
լուռ եւ արագ:

Երբ դիտակցութիւնը վերստացաւ,
իմամելա ջղագար լաց մը սկսաւ: Բոնա-
բարուած, ախտավարակ մարդոց վէր-
քէրէն պլշկած, կատարեալ եւ խոր յու-
սահաստութեամբ մը կը դդար թէ զըկը-
ւած է այլեւս սիրելու հաճոյքէն: Ո՞ւր

էին իր երկու լնկերուհիները, ի՞նչ եղան
առեւանգումէն ետքը, ի՞նչպէս մինակ
մնացեր էր լերան կողին վրայ, — չէր
յիշեր: Կուլար, բայց միեւնոյն ատեն իր
ուղեղը կ'աշխատէր լուծում մը դտնել
կացութեան:

Երկու օր վերջ Ռամելա տեսնուեցաւ
Բերէայի գիւղերուն մէջ, ուր կը մու-
րար: Յետոյ ծառայութեան մտաւ: Հի-
ւանդութիւնը դեռ նշաններ ցոյց չէր
տար: Եւ հակառակ իր տրտմութեան ու
վիշտին, զեղեցիկ էր ան: Մազերը նշե-
նիի ծաղիկներու գոյնն ունէին արեւին
տակ, եւ մարմինը փղոսկրի պէս էր: Ա-
հա թէ ինչո՞ւ բախտն ունեցաւ ծառայու-
թեան մտնելու: Դէպի հիւսիս, ճամբան
բաց էր, եւ Ռամելա բորոտ ժողովուր-
դէն հեռանալով՝ անցաւ նախ Բերէա,
յետոյ Յուդայի երկրէն՝ Յորդանանի
վերին հովիտը:

Զմեռը անցաւ այսպէս:

Գարունը կանխահասութեան պատ-
րանքներ ունի այս երկրին մէջ: Վաղա-
բողբոջ ծառեր կան, որոնք գոյնզգոյն

կոճակներ կը ցուցադրեն, յետոյ լայն կը
բանան իրենց պատմուճանը, արեւի
գոյն:

Ռամելա Գեննեսարէթի լիճին նա-
յող բարձունքներուն վրայ, այգիի մը
մէջ, որթատունկ կը մաքրէր: Մանուկ
մը խնամելու ոլէս, կը գգուէր բարու-
նակները, կը փրցնէր նախորդ տարուան
զօսացած ընձիւղները, կը գիտէր աչքե-
րը, որոնք գնդասեղի մը գլուխին մեծու-
թիւնն ունէին արդէն: Այդ մանտրափիկ
ուռերը յիշեցուցին, որ իր դէմքին վր
րայ ևս բուսած են, քանի մը օրէ ի վեր,
նման բշտիկներ: Վախով խառն հոգով
մը, քակեց կուրծքը եւ դիտեց որ երկու
ծիծերուն մէջանդը մորթը արցունքո-
տեռ էր: Որթատունկին աչքերուն նման,
քիչ մը աւելի մեծ, կոճակ կոճակ դուրս
տուեր էր միսը: Մատները ճակտին ու
այտերուն տարաւ, շօշափեց մորթը:
Զգաց որ իր մորթն ալ կը բուսնի, կո-
կոններ կուտայ: Ի՞նչ կը նշանակէր այս:
Միտքը ինկաւ բորստութիւնը: Սարսո-
փեցա՛ւ: Հիւանդութիւնը այժմ կ'աշխա-
տէր իր մարմինին վրայ, իր գեղեցիկ ու
ծաղկունակ մորթին վրայ:

Գաղտնօրէն բաժնուեցաւ մշակներուն աչքէն։ Բարձրացաւ բարձունքն ի վեր, աւելի՛ վեր, աւելի՛ վեր։ Նոյնիսկ պահ մը վազեց, սակայն յոզնեցաւ եւ ստիպուեցաւ մագլցիլ յամրօրէն։ Աճապարանք կար նաեւ այդ յամը շարժումին մէջ։ Ի՞նչ որոշում ծնաւ միտքին մէջ։ Ո՞ւր կ'ուզէր բարձրանալ։ Անձնասպա՞ն կ'ուզէր ըլլալ։ Երբ, յոզնած ու հեւառպառ, կանգ առաւ լերան կողին վրայ, դարձաւ ետին, դիտեց դաշտերն ու հեռուները։ Մշուշին մէջ, հեռո՛ւն, շա՛տ հեռուն, սպիտակ պատկեր մը կար։ Կարծեց, որ Երուսաղէմն է։ Յիշեց այն օրերը, Երբ սէրով լեցուած, Երուսաղէմ կ'երթար։
— Երուսաղէ՛մ, Երուսաղէ՛մ, գեղեցիկ՝ քաղաք։
Ծունկի ինկաւ ու լացա՛ւ, լացա՛ւ։

Լերան հովը, սակայն, կ'արթնցնէր իր կամքը, դիմագրելու եւ տոկալու բը նազդը։ Խորհեցաւ մեկնիլ թեկուա։ Ուզեց գտնել իր սիրականը, որ թերեւս սիրոի սիրէր զինք, թէեւ բորոտ էր եւ

բոնաբարուած։ Սակայն, յանկարծ, իր
յիշողութեան մէջ յայտնուեցան Սադա-
յէլին խօսքերը, զորս ականջը, իր ուշա-
թափութեան պահուն, ներս վոխագրեր
էր ու պահեր անդիտակցութեան մէջ։

— . . . Գացէ՛ք տարածեցէ՛ք Զարիքը
երկրի վրայ, ամէն կողմ . . . :

Վախցաւ որ Սադայէլ մտեր է իր հո-
գին եւ կը թելագրէ Զարիքը տանիլ մին-
չեւ սիրականին ծոցը։ Խորհեցաւ այն
ահաւոր չարիքին վրայ, որ պիտի հար-
ցնէր Եօնաթանի, անոր ծնողքին, զրա-
ցիներուն ու գիւղին։ Մինչդեռ, որը աղ-
ջիկ, ինչքա՞ն բարիք էր տեսեր Եօնա-
թանի ծնողքէն։ Որոշեց մնալ, ծառա-
յել օտարութեան մէջ։ Ծառայի անկողի-
նը միշտ հեռու կը պահէր իր ախտը մար-
դոցմէ։ Իսկ եթէ մեռնէր, որո՞ւն ցաւը։

Բայց կը սիրէր, Ռամելա ծնած էր
սիրոյ համար։ Անկարելի էր մեռնիլ Եօ-
նաթանէն հեռու։ Չմեռած, կ'ուզէր տես-
նել զայն։ Ինչո՞ւ ուշացեր էր մինչեւ այ-
ժըմ։ Այլ մի՞թէ Սադայէլը չէր, որ կը
յաճախէր հիմա իր ուղեղը։

Արագօրէն վար իջաւ լեռնէն։ Բոնեց
թեկուայի ճամբան։ Իր սիրոյ ճամբան։
Սիրահարը իր սիրած անձին մէջ միշտ
ինքինքն է որ կը սիրէ։ Ռամելա չու-
զեց զրկուիլ այն վայելքներէն, զորս ի-
րեն պիտի տար Եօնաթանի սէրը։

Թեկուս գեղեցիկ գիւղ մըն է։ Ալե-
ծուփի կանանչութեան մէջ լոգցող սպիր-
տակ տնակներու կղզի մը, ուր ծնած են
մարդարէներ, յայտնատես քերթողները
Եբբայեցւոց։

Եօնաթան եւս մարդարէ մըն էր, ե-
րիտասարդ եւ տաղանդաւոր։ Սէրը
քանդեց անոր իմացականութեան այ-
դին։ Ռամելայի կորուստէն ետքը երբ
մարդարէացաւ Երուաղէմի կորուստը,
դարձաւ իր գիւղը, հետզհետէ համրա-
ցաւ, վշտակեաց ու մտահոգ երեւոյթ մը
առաւ։

Իսկ երբ Ռամելա գիւղ հասաւ, Եօ-
նաթան յիմար գարմացումի մը մէջ ին-

կած էր արդէն։ Ապուշի պէս նայեցաւ
անոր, առանց յուզումի արտաքին նշան-
ներու՝ արցունք թափեցան աչքերէն։
Հայրը վախով լեցուած, կը խրախուսէր
ու կը ջանար խանդավառել։ Ռամելա ո-
չինչ կրցաւ պատմել։ Լացաւ, որովհե-
տեւ Եօնաթան «չէր սիրեր»։

Բայց երբ Ռամելա անկողին ինկաւ,
Եօնաթան չհեռացաւ քովէն, ինչպէս
թոշունը իր ձագերուն բոյնէն։

Եօնաթան, կարծես, ինքզինքին կը
հարցնէր թէ կը սիրէ՞ր տակաւին։ Կամ
ի՞նչն էր, որ կը սիրէր։ Այդ ահաւոր տը-
գեղութի՞ւնը, որ գարշանք կ'ազդէր։
Զկային այլեւս աղուոր աչքերն ու շրթ-
ները, կլոր կուրծքն ու բազուկները։
Միթէ իր սէրը կի՞րքն էր, որ մեղուի
պէս կը պտըտի անուշ ծաղիկներու վը-
րայ։ Եւ կը լքէ, երբ գուացած են ա-
նոնք։

Բորոտութիւնը ահաւոր սաստկու-
թեամբ մը զարկեր էր Ռամելան։ Գլուխն
էր, որ վարակուած էր։ Վէրքերը հետ-
զհետէ անճանաչելի դարձուցին այդ գե-
ղեցիկ դէմքը։ Առառու մը սրտակեղեք
ձիչ մը արձակեց ան։

— կուրացա՛յ, կուրացա՛յ . . . :

Ժամանակ մը վերջ լեզուն ալ չէր
դառնար բերանին մէջ: Ծնողքը գուշա-
կած էր ախտը, եւ կ'ուղէր դուրս նետել
հիւանդը: Եօնաթան փարած էր անոր
անկողինին եւ կ'արգիլէր: Ու կը դիտէր
թէ ի՞նչպէս օրէ օր կը հալէր հիւանդին
միսը: Աչքերը խսուշներու պէս մութ եւ
ահաւոր, այտոսկրերը չորցած հողի պէս
ցցուած, բերանին մէջ հոնդիւն մը մի-
ան:

Ռամելա իրիկուն մը սկսաւ չնչել
ընդհատ ընդհատ: Երբ շունչ կ'առնէր,
քիթին երկու կողմերը կը կազմուէին
աղեղնաձեւ ակօսներ, շրթունքները կը
պրկուէին եւ ակսաները դուրս կը ցըց-
ուէին: Զափազանց արագ կը կատար-
ուէր այդ, քիչիկ մը շունչ կը մտնէր
ներս, որ գրեթէ չէր պարպուեր: Եօնա-
թան կը դիտէր ահաւոր հոգեվարքը:
Ռամելա շունչ մըն ալ առաւ, այս ան-
գամ քիչիկ մը երկար: Շրթունքները ան-
գոյն ժապաւէնի պէս ակսաներուն վրայ
պրկուած, երկու խորշոմները կարծես
դանակով կտրեցին մորթը քիթին երկու
անկիւնէն, յօնքերը սեղմուած ցաւագին

Երեւոյթով մը, ակռաները կափկափեցին ու կաւիճի նման դուրս ինկան։ Ուստի մելա չկրցաւ աւելին, եւ մեռաւ այդ պրկումին մէջ։

Ահաւո՞ր, ահաւո՞ր ծիծաղ մը գըծւեր էր դէմքին վրայ։

Եօնաթան, վախցած, կենդանիի պէս զռալով՝ փախաւ դուրս։

Փախա՞ւ դէպի Երուսաղէմ։

Դիւահարի պէս անհանգիստ էր, չէր կրնար վայրկեան մը կանդ առնել ու հանգչիլ։ Անդիմագրելի ուժ մը կը հալածէր զինք, եւ յառաջ կը մղէր ոտքերը։ Դէմքին վրայ կը ծփար տառապանքի անհուն արտայայտութիւն մը։ Ու կ'աճապարէր, ուշացած մարդու մը պէս սրտնեղ ու քրտնոծ՝ կը վաղէր անընդհատ։ Ոչ ետեւը կը նայէր, ոչ ալ շուրջը, աչքը՝ ոտքին մատներուն վրայ, կը վաղէր շարունակ ու դիւահար, — երբ այլեւս յոգնած՝ պահ մը կը դանդաղեցնէր քայլերը, ցնցում մը կը զգար

ու նորէն կը վազէր: Թեկուայէն մինչեւ
Երուսաղէմ, Երկուքուկէս մղոն տարա-
ծութեամբ այդ ճամբան, վազեց առանց
Երբեք հանգչելու զով ստուերի մը մէջ:

Երբ կը մօտենար Երուսաղէմի,
Ճամբուն վրայ հանդիպեցաւ ժողովուբ-
դի Երկար կարաւանի մը: Ուխտաւոր-
ներ չին անոնք, որովհետեւ Պատեքի
տօները գեռ հեռու էին: Անոնց անձկու-
թիւնը կը պատմէր ամէն բան: Գաղթա-
կաններ էին անոնք, որ կը փախչէին Տի-
տոսի բանակին առջեւէն: Եօնաթան
խառնուեցաւ փախտականներուն, ո-
րոնք կը խռնուէին Երուսաղէմի պա-
րիսպներուն տակ:

Երբ գարնան առաջին տերեւները
բացուեցան, Տիտոս, Երիտասարդ եւ
տաղանդաւոր զինուորականը, որ յետոյ
բարձրացաւ Հռոմի գահը, հրամայեց
իր լեգէոնին քալել Երուսաղէմի վրայ:
Ու «մարդկային մակընթացութիւ-
նը» բազմաթիւ թեւերով յառաջացաւ
ծովեզերքէն դէպի ներս:
Առաջին առթիւ Երբայեցիները ու-

ըախացան, որ Տիտոսի ռազմավարութիւնը տեղի կ'ունենայ համաձայն իրենց գուշակութեան։ Այդ ընթացքով դիւրին պիտի ըլլար իրենց պաշտպանողականը, եւ Երուսաղէմ պիտի կրնար դիմադրել, որովհետեւ ամբացուած էր համաձայն այդ ռազմավարութեան։ Յարձակումը, կ'ըսէին անոնք, առևահովաբ տեղի պիտի ունենայ Զիթեն եաց լեռան կողմէն։ Քաղաքը, որ կը բարձրանար չորս բլուրներու վրայ, երեք կողմէ պաշտպանուած էր ցից զառիվերներով, որոնց ստորոտը կը բացւէր խորունկ ձոր մը, եւ աւելի անդին կը բարձրանար հսկայ բլուր մը։ Այնպէս որ ճամբորդը մինչեւ որ չմօտենայ, չի տեսնեց քաղաքը։ Հիւսիսային կողմր բաց էր։ Թշնամին անարդել կրնար դար, թափանցելով Գիսոնի հեղեղատէն մինչեւ Գեղրուայ լեռները, եւ յանկարծ դառնալով դէպի աջ, ուղղակի Երուսաղէմի պարիսպները։

Հոռվմէական լեզէոնը աւլեց Փղրշտացւոց երկրին մէջ բոլոր պահակազօրքերը, եւ յաջորդաբար ինկան Ողողոմ, Գեթ, Մորիսա եւ Մորիսէթ քաղաքնե-

ըը։ Եւ յանկարծ Տիտոսի զինուորները
անկուեցան Երուսաղէմի բարձունքնեւ
ըուն վրայ։ Երբայական զօրքը առիթն
խոկ չունեցաւ պատերազմ մղելու բացե-
րը։ Տիտոս յառաջ քշեց լեզէոնները եւ
մայրաքաղաքը դարձաւ կզզի մը, որ կը
ծփար հոռվմէական«մակընթացութեան»
մէջ։ Ան սպայակոյաը հաստատեց Զի-
թենեաց լերան վրայ, եւ բանակը բաժ-
նեց երեք օգակներու, զորս անցուց Ե-
րուսաղէմի վիզին։ Երբայեցւոց մայրա-
քաղաքը պաշարուած էր այլեւս երեք
շղթայով։ Տիտոս կտրեց ամէն հաղոր-
դակցութեան միջոց, կտրեց նաեւ քա-
ղաքին ջուրի ճամբանները։ Եւ սպասեց,
աշխարհակալի անդիտութեամբ, որպէս-
զի որսը տառապի երկար հոգեվարքի
մը վայրկեաններուն մէջ։

Երուսաղէմի պաշարումը զինուո-
րական պատմութեան ամէնէն սարսա-
փելի դրուագներէն մէկն է։ Երբայա-
կան հին կորովը եւ հոռվմէական յամա-
ռութիւնը կը պայքարէին նոյն ուժգնու-
թեամբ, դէմ առ դէմ։

Եւ Երուսաղէմ դիմադրեց Երկար
ատեն:

Ի՞նչպէս պիտի վերջանար այս կոի-
ւը, ոչ ոք գիտէր: Երուսաղիմացին
չէր իսկ հարցներ իր հոգիին: Գիշերները
կը նայէր լուսնկային, որ ճերմակ ու կը
լոր ծունկի մը նման գուրս կ'ի յնար ամ-
պերուն վերմակին տակէն: Աչքերով կը
բռնէր զայն, ու սաղմոս մը կը դրկէր,
օդնութիւն եւ աղատութիւն կը հայցէր
այդ ճերմակ ոսկորէն, ինչպէս բանառ
տեղծները իրենց տաղերը կ'ուզդէն ա-
նոր, երբ կը խօսին սիրականին մասին:

Յանկարծ, վերէն, Զիթենեաց լեռ-
նէն, որ կը լոգնար լոյսի փոշիի մը մէջ:
կը բարձրանար անուշ ձայն մը, կը տա-
րածուէր օդին մէջ, կը թօթվուէր Երու-
սաղէմի վրայ: Հելլէններ շատ կային
Տիտոսի բանակին մէջ, (ոմանք կը պըն-
դէին թէ հելլենական արիւն ունէր նաև:
Տիտոս), եւ այդ վարձկան զինուորներն
էին, Երիտասարդ եւ մատղաշ, որ կ'եր-
գէին Պինդարի եւ Սափոյի սիրային
քերթուածները.

Լուսնիան միրնուեցաւ ծովին մեջ,
Լուսնիային հետ' աստղերն ալ:
Գիշերը կէս եղաւ արդէն.
Ժամը կը սակի',
Ու ես, մինա'կ, պառկեր եմ հոս:

Վարէն, Սիոնի միջնարերդէն եր -
կինք կը թռչէր թաւ ձայն մը, կարծես
մենամարտելու համար թշնամի ձայնին
Հետ:

Ոտքի' ելիր, ոտքի' ելիր, Դեբորա',
Ոտքի' ելիր, եւ հնչեցուր երգդ,
Ոտքի', Բարաք,
Բե՛ր զերիներդ, որդի' Արինովամի:

Երկու ձայները կ'ոստոստեն միջո -
ցին մէջ, կը մօտենան ու կը գրկուին:
Կը հեւան, կը տանջուին: Երիտասարդ
ձայնը սիրոյ տենդ ունի.

Սիրոյ Աստուածը այրեց զիս,
Ու ես կ'երգեմ.

Աստուածայի՞ն քնարս , լեզու ա'ն ,
Եւ պատմէ ցաւը որ մրկեց զիս :

Թաւ ձայնը կ'ուռի , կը թանձրա -
նայ , կը դողայ եւ կը ծածկէ քնքուշ
ձայնը : Օդը , փշաքաղ , կը սարսուայ .

Բուռ մը մարդիկ ելան բերդերուն դիմաց ,
Եահվէին ժողովուրդը ելաւ քաջերուն դիմաց :
Երկինքի բարձութեն ասուղերը եւս կոռւեցան ,
Իրենց շաւիդէն՝ կոռւեցան Սիսերային դէմ :

Յետոյ կը զարնուի թշնամի ձայ -
նին , կը ճեղքէ զայն .

Յառա'զ , հոգի'ս , յառա'զ քաջաբար : Եւ ,
Այն ատեն , ձիերուն սմբակները դափեցին հողը ,
Սրարշա'ւ , քառարշա'ւ , դէպի քաջերը :

Մատաղատի ձայնը կը ցատկէ վեր ,
ծանրութեան մը բեռէն արձակուած

**Ճիւղի մը պէս՝ կը բարձրանայ վեր, կը
տարածէ թեւերը, կը սաւառնի.**

Ո՞վ դուն, անմաշ Աստղիկ,
Ոսկեղէն գահ,
Ճարտար վարպետ,
Մի՛ ընկներ իմ հոգիս :
Եղիր իմ դաշնակիցս,
Եւ եկո՞ւր ինձի, օ՛ գերեզանիկ,
Ինչպէս, ատենօֆ, կուգայիր,
Պապդուն կառքդ լծած
Թերեւարիո նննդուկներուն,
Որոնց յարաշարժ քեւերը
Կը պտուտքէին գորշ հողին վրայ,
Եւ կը հասնէին մէ՛կ վայրկեանէն :

Թաւ ճայնը կ'ուշանայ հեռուն.

Երգեցէ՛ք, երգեցէ՛ք
Երք կ'աշտանակէ՛ք սպիտակ ու մատակ էշերը,
Նստած գորգերու վրայ, —
Երք կը սուրաք նամբաներէն,
Երք կը սուլէ՛ք ձեր հօտին ետեւէն,

Որ ջուր կը խմէ առուակներէն,
Երգեցէ՛ք,
Փառաբանեցէ՛ք Եահվէին յաղըուրինները,
Խարայէլի մեծերուն յաղըուրինները,
Որ դուռները իշեցուցին Եահվէին ժողովուրդը :
Երգեցէ՛ք,
Գիտնի հեղեղատը զանոնի քշեց տարաւ,
Հօրեայ Գիտնի հեղեղա՛տը :

Եւ հաստ ու նուրբ այս երկու ձայ-
ները նարօտի երկու գոյն թելերու նման
կը փաթթուին իրար, կը գրկուին ու կը
զուգուին : Երկու օտար ու թշնամի ձայ-
ները կը համերաշխին երկինքին մէջ, կը
պառկին Երուսաղէմի վրայ, անուշ զգա-
յութեամբ մը քնացնելով Զիթենեաց ու
Սիոն լեռներուն զինուորները :

Սակայն, յանկարծ, սիրոյ եւ գինո-
վութեան այդ պահուն, թաւ ու քնքուչ
երկու ձայներուն վերջին հետքին հետ,
անծանօթ եւ սպառնագին ձայն մը կը
բարձրանայ գիշերուան մէջ եւ կը սար-
սափեցնէ Երուսաղէմ քաղաքը .

— Վա՛յ քեզ, Երուսաղէմ, վա՛յ
քեզ:

Երուսաղիմացիները կը պնդէին թէ
մարդ մը կը վազէր փողոցներուն մէջ,
կէս դիշերին, ևւ կը պոտար կենդանիի
նման: Թերեւս դիւահար մըն է, որ հա-
լածական, կը վազվզէ ևւ կը կորսուի ա-
ռաւոտները:

Տիտոս ապասեց օրեր ու օրեր: Գի-
շեր մը փոխեց իր սազմավարութեան
ծրագիրը: Եւ շարժեցաւ ինչպէս պատ-
մութեան բոլոր մեծ զօրապետները, ո-
րոնք նմանօրէն ապահոված են իրենց
փառքը, — գործադրելով անկարելի ծրա-
գիրներ Մեծն Աղեքսանդրին նման: Ռազ-
մավարական եղանակները կը թելու-
դրէին Երուսաղէմի գրաւման համար
յարձակիլ ուղղակի Սիոնի վրայ: Զեռք
ձգել նախ Երուսաղէմի ամէնէն բարձր
դիրքը, որ բանալին էր բոլոր միւս բեր-
գերուն: Սակայն Երբայեցիները այնքան
ամրացուցած էին զայն, որ անկարելի
էր յարձակմամբ գրաւել: Թշնամին չէր
կընար նաեւ ներս մտնել ստորին քաղա-

քէն, որովհետեւ կ'ենթարկուէր բարձր
դիրքերու ձնշումին։ Եւ սակայն Տիտոս
փորձեց այդ հակառագմագիտականնամ-
րան։ Գիշերային անակնկալ եւ ուժգին
յարձակումով մը գրաւեց Ակրայի պա-
րիսպը, որ ամէնէն ցածն էր։ Ստորին
այդ քաղաքը, Ակրա, կապուած էր Մո-
րիա քաղաքին, ուր կը գտնուէր տաճա-
րը։ Նախապէս ձոր մը կը բաժնէր այս
երկու բլուրները, սակայն տաճարին
հետ հաղորդակցութիւնը ապահովելու
համար, ետքէն ձորը լեցուցին։ Այդ
ճամբան ճակատագրական գեր խաղաց
երուսաղէմի պաշտպանութեան ընթաց-
քին։ Հոռվմէացիները ուժգին թափով
մը ուղղուեցան դէպի տաճարը։ Ուրիշ
թեւ մը քալեց Մորիայի եւ Սիոնի բլուր-
ները միացնող կամուրջին վրայէն դէպի
Դաւիթի պալատը։ Ահաւոր տեսարան
մը պարզուեցաւ այդ պահուն։ Տաճարին
պահակազօրքը գերազանցեց Մովաբաց-
ւոց հոչակաւոր քաջութիւնը։ Գիրկընդ-
խառն կուիւին մասնակցեցան կիներն ալ,
որոնք տանիքներէն վար ծանրութիւն -
ներ թափեցին։ Կարծես բոլոր երրայե-
ցիները երդում ըրած էին թափել իրենց

արիւնը, պաշտպանելու համար գեղեցիկ
քաղաքը: Սիոնի առջեւ պարտուեցան
Հոռվմէացիները, — այնքա՞ն կատաղի
էր դիմագրութիւնը: Սակայն Մորիա կը
տատանէր: Այն ատեն բախտը վճռեց
Հրդեհը, որ յաղթութեան միակ միջոցն
է պատերազմական պատմութեան մէջ,
երբեմն յաղթուողին, երբեմն պար-
տուողին համար: Հոռվմայեցի զինուոր
ները կուպր թաթխեցին քուրջերը, վար-
ուեցին եւ նետեցին տաճարէն ներս:

Քիչ վերջ բոցերը կարմիր կոհակնե-
րով կը ժայթքէին տաճարին բազմաթիւ
դուռներէն: Այդ պահուն, բոցերուն մէ-
ջէն դուրս վաղեց խենթ մը որ պոռաց.
— Վա՛յ քեզ, Երուսաղէ՛մ, վա՛յ
քեզ, վա՛յ քեզ...

Եօնաթանն էր: Հոռվմայեցի զինուոր
մը բռնեց զայն, իր հուժկու ուսերուն
վրայ բարձրացուց եւ նետեց բոցերուն
մէջ:

... Սիոն կը դիմագրէր տակաւին:
Յարձակողները, բոցերուն օգնու-
թենէն խանդավառ, կրակ կը նետէին
ամէն կողմ: Եւ Սիոնն ալ սկսաւ ծխալ:
Արեան նման բոց մը հոսեցաւ այդ բար-


Ճունքէն եւս : Քաղաքը կ'այրէր իր չո՛րս
բլուրներուն վրայ, գեհենական անօթ
ներու նման : Այդ պահուն՝ աննկարագը-
րելի՛ էր խուճապը : Այլեւս ոչ թշնամի
իշար, ոչ ալ պաշտպան : Բոցերուն եւ
ծուխին մէջ ոչինչ կարելի էր ճշդել : Պա-
տերազմը դադրած էր : Հրդեհն էր, ոչ
հիմա կը կռուէր Երրայեցիներուն ու
Հռովմէացիներուն դէմ : Պատմութիւնը
չի դիտեր թէ ո՞վ յաղթեց այդ դժոխա-
ւին գիշերուան մէջ :

Օրեր ետքը հերկուեցաւ գեղեցիկ
Երուսաղէմի մոխրակոյտը, եւ հոն, ուր
տաճարը սպիտակ ծաղիկներու փունջի
մը նման Եահվէին կը մատուցանէր իր
ճերմակ գմբէթը, հասարակ ու քոսոտ
արտ մը միայն կ'երեւէր :

Վ Ե Ր Զ



[6047]
[In 6047]



ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՑԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՄԱՐՍԵԼ**

ԳԻՆ 5 ՖՐԱՆՔ

Արտասահման՝ 7.50 կտմ 10 ֆրանք, ըստ երկրի

ԱՊՍՊՐԱՆՑՆԵՐԸ ԿԱՆԱԺԿ

Դիրաց, Հայ Մշակութային Միութեան
Դանձապահին

S. DIRADOURIAN

2, Rue Philippe de Girard, MARSEILLE

Printed in France